№ 141 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 1
1906
ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 1 № 141
ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ամեն տեղ 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ յուլիսի 1-ից մինչև 1 հոկտեմբերի 2 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ.պ. անդամների, փոխանդամների և ժամանակաւոր յաճախողների, որ երեքշաբթի և շաբաթ օրերը, ընտանեկան երեկոյթների ժամանակ, ամառային շինութեան մէջ նուագում է ստրունի նուագախումբ կապելմէյստէր Մաշների ղեկավարութեամբ։ Այդ երեկոները աշակերտները և երեխաները չեն ներս թողնվում, իսկ մնացած օրերը նրանք կարող են յաճախել մինչև երեկոյեան ժամը 9-ը, միմիայն ծնողների հետ, ներկայացնելով ժողովարանի գրասենեակից տրված կօնտրամարկաներով, որոնք տրվում են ամեն օր երեկոյեան ժամը 8-ից մինչև 11-ը։ ար (ամ. 1,6,9) 1—3

ՀՐԱՒԷՐ

Ջիգրաշէն եկեղեցու պ.պ. ծխականները հրաւիրվում են ժողովի նոյն եկեղեցում կիրակի, յուլիսի 2-ին, ցերեկվայ 12 ժամին, խորհրդակցելու հետևեալ հարցերի մասին։

1. Ջիգրաշէնի երկսեռ դպրոցների կարիքների և բարդված պարտքի մասին։
2. Եկեղեցու ներքին և արտաքին բարեզարդութեան։
3. Երէցփոխի 1905 թ. հաշիւը քննելու (այս հարցի մասին երկրորդ ժողովն է)։
4. Նոր երէցփոխ ընտրելու։

Որովհետև առանձին հրաւէրներ չեն ուղարկվելու, ուստի խնդրում ենք անպատճառ շնորհ բերել և հնարաւորութիւն տալ վերոյիշեալ անյետաձգելի և անհրաժեշտ հարցերը կարգադրելու։

Ջիգրաշէն եկեղեցու՝ Գ. աւ. քհ. Աբուլեանց
Երէցփոխ Ա. Քալանթարեանց
(շ.կ.) ար 1—2

№ 4
„ԽԱԹԱԲԱԼԱ“

Երգիծաբ.-սատիրական շաբաթաթերթի լոյս կը տեսնի շաբաթ, յուլիսի 1-ին։

№№ 1, 2, 3 և 4 վաճառվում են Թիֆլիսում խմբագրատանը և լրագրավաճառների մօտ, նոյնպէս և Բագու, Գանձակ, Երևան, Էջմիածին, Ղարս, Ալէքսանդրօպօլ, Արդահան, Ախալցխա, Ախալքալաք, Բաթում, Փօթի, Անապա, Արմաւիր, Ստաւրօպօլ, Պեատիգօրսկ, Մօզդօկ, Ղզլար, Վլադիկավկազ, Գրօզնի, Ղուբա, Աստրախան, Մօսկվա, Շուշի, Սղնախ, Լագոդեխ, Նուխի, Ագուլիս, և ուրիշ քաղաքներում։ Հասցէն՝ Тифлисъ, редакція Юморо-Сатирич. журнала «Хатабала».

Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան
(ու. շ.) 2—2

Բագւում սկսել է լոյս տեսնել հայերէն և թուրքերէն լեզուներով

„ԿՈՉ-ԴԷՎԵՏ“

լրագիրը, որ բացառապէս նուիրված է հայ-թուրքական ընդհարումներին՝ նպատակ դնելով վերջ տալ ցաւալի եղբայրասպանութիւններին. սրանով կոչ է անում այն բոլոր անձերին, որոնց համար թանգ և նուիրական է այդ նպատակը, շտապեն թէ բաժանորդ գրվելով և թէ նիւթական նպաստներով աջակցել նրան և կարելիին չափ շատ տարածել թերթը իրանց շրջաններում։

Լրագրի հասցէն է։ Баку. Редакція газеты «Кочъ-Дэветъ», у. Барятинской и Милютинской, д. Султановой.
ար. (շ.շ.) 5—5

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
„ՄՈՒՐՃ“
ամսագրի բաժանորդագրութիւնը։

Բաժանորդագինը տարեկան 10 րուբ.։ Ծխական դպրոցների ուսուցիչների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների, արհեստաւորների և բանւորների համար 8 րուբլի։ Ամսավճարով բաժանորդագինն է 85 կոպէկ։ Բաժանորդագրութիւնը Թիֆլիսում բացի խմբագրութիւնից (Ճաւճավաձեան փող., տ. № 12) ընդունվում է նաև «Գուտտենբերգ» գրախանութում (Երևանեան հրապարակ)։ Դրսից դիմել՝ Тифлисъ «Мурчъ».

«ՄՈՒՐՃ»-ի յուլիսի համարը (1906 թ. № 7) լոյս է տեսնելու յուլիսի 1-ին և չի ուղարկվելու այն բաժանորդներին, որոնք չեն լրացրել այս տարվայ բաժանորդավճարը։
(ար.) 5—5

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հոգաբարձական իրաւունքները. Վերջին տեղեկութիւններ. Հողային խնդիրներ. Շարժումներ. Հայկական բարեգործական ընդհանուր միութիւն. Գեղեցիկ բայց ապարդիւն խորհուրդներ. Անիի ժողովը և Շիրակի պահպանութեան հարցը. Ուսուցչական համաժողովը. Վերջ չը կայ. Մոռացված անկիւններ. Թատրօն և երաժշտութիւն. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր. Պետական Դումա. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

## ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

### VII

Մենք ասացինք, որ Անանեան և Ներսիսեան դպրոցների հոգաբարձութիւնների գործողութիւնները ուսուցիչներին արձակելու կամ նախկին պաշտօններում թողնելու վերաբերութեամբ կրում են ոչ թէ իրաւաբանական, այլ բարոյական բնաւորութիւն։

Մենք նոյնպէս ցոյց տուինք, թէ ինչ դժուարութիւնների մէջ է ընկել Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, որը դեռ իրապէս իր պաշտօնավարութեան մէջն է, իսկ, միևնոյն ժամանակ, կարող է մի քանի ժամանակից յետոյ թուղթ ստանալ, թէ նոր հոգաբարձութիւնը հաստատված է և ուրեմն պէտք է նա հեռանայ, գործերը յանձնելով նոր կազմութեան։

Այդ դժուարութիւնները մի կողմից, իսկ որոշ կարգադրութիւնների անհրաժեշտութիւնը միւս կողմից դրել էին հոգաբարձութիւնը ծանր վիճակի մէջ։

### VIII

Երէկվայ մեր յօդուածում մենք ասացինք, թէ հոգաբարձութիւնը կարող էր իր մի քանի որոշումները կայացնել պայմանաւոր կերպով, աչքի առաջ ունենալով նոր հոգաբարձութեան մօտալուտ գալը։

Բայց այդ տեսակ գործողութեան մի եղանակի ընդունել-չընդունելը կախված է մի շարք հանգամանքներից և նկատումներից։

Ի՞նչ պայմանական որոշումներ, օրինակ, կարող էին տեղի ունենալ։

Օրինակ, հոգաբարձութիւնը կարող էր յայտնել ուսուցիչներին, թէ նրանք եթէ բացասական պատասխան չը ստացան հոգաբարձութիւնից մինչև դիցուք յուլիսի 1-ը կամ յուլիսի 15-ը՝ այն ժամանակ կը համարվեն հաստատված իրանց պաշտօններում։

### IX

Կարելի է ենթադրել, որ մի որոշ ժամանակամիջոց սահմանելը այն նշանակութիւնը կունենար, որ գուցէ մինչև այդ ժամանակ նոր հոգաբարձութիւնը հաստատվէր, մտնէր իր պաշտօնավարութեան մէջ և կարողանար իր կարգադրութիւնները անել ուսուցիչների վերաբերութեամբ։

Սակայն հոգաբարձութիւնը բացարձակապէս մեղադրել՝ թէ ինչու նա այդ կամ դրա նման մի որ և է պայմանական որոշում չէ կայացրել՝ դժուար է, որովհետև, որքան մեզ յայտնի է, Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը մի քանի տարի սրանից առաջ, որոշ հանգամանքներից դրդված, որոշում էր կայացրել՝ հարցաքննութիւններից յետոյ, ամառվայ արձակուրդից առաջ յայտնել ուսուցիչների մնալ չը մնալու մասին։

Բացի այդ, հոգաբարձութեան մէջ մի քանի անգամ հարց էր ծագել, որ ուսուցիչները համարվեն դպրոցի պաշտօնեան մինչև այն օրը, երբ նրանց կը հրաժարեցնեն որ և է պատճառով։

Պայմանական որոշումներ կայացնելը մի գործ է, որ կախված է մի շարք հանգամանքների և նկատումների ազդեցութիւնից։

### X

Անկասկած է մեր բոլոր ասածից, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան առաջ դրված է եղել մի փափկանկատ հարց լուծման համար։

Անկասկած է և այն, որ նոր հոգաբարձական կազմ ընտրող հասարակութիւնը կը ցանկանար տեսնել այդ կազմը օր առաջ գործի գլուխ կանգնած և դպրոցի ղեկավարութիւնը իր ձեռքը վերցրած։

Բայց ի՞նչ կարելի է անել երբ հինն նորով փոխարինելը դեռ տեղի չէ ունեցել. իսկ դպրոցի հոգաբարձութեան վրա, լինի նա հին թէ նոր՝ այդ միևնոյն է, ծանրացած են որոշ հերթական գործեր, ընթացիկ պարտաւորութիւններ։

Եւ մենք միայն մի բան կարող էինք ասել, թէ ամեն մի խոշոր կարգադրութիւն, կարելիութեան դէպքում, պէտք էր յետաձգել, իսկ կարգադրել միայն անհրաժեշտը և ընթացիկը։

### XI

Ուստի հարց է առաջ գալիս թէ ինչպէս համարել ուսուցիչներ հրաւիրելու գործը. հերթական մի հարց թէ այնպիսին, որ կարելի կը լինէր յետաձգել մի առ ժամանակ։

Որ հարցը հերթական և ընթացիկ է, դա անտարակոյս է, բայց թէ կարելի էր նրան յետաձգել և այն էլ որքան ժամանակով յետաձգել, դա մի հարց է, որ վէճերի տեղիք է տալիս։

Մենք կարող էինք ցանկալ, որ հոգաբարձութիւնը պայմանական որոշում կայացրած լինէր, բայց այն բանի համար, որ նա չէ կայացրել այդպիսի որոշում, անկարելի է անմիջական մեղադրանքներ բարդել հոգաբարձութեան վրա։

Ա. Քալանթար

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեզ հաղորդում են Երևանից, որ յունիսի 29-ին առաւօտեան ժամի 4-ին պայթիւնից քանդվել է Ռուբէն Յովսէփեանցի տունը։ Սպանվել են երկու երեխաներ, ծանր վիրաւորվել են երեքը, երկուսն էլ թեթև կերպով։ Քննութիւն և պեղումներ են կատարվում։

—

Դաղստանի շրջանի Թէմիր-Խան-Շուրայի ոստիկանապետը զեկուցանում է Փոխարքային, որ յունիսի 26-ին այնտեղ պարսկահպատակ Մահմէդ Ալէքպեր օղլին, հարբած դրութեամբ մտնում է տեղական հայ վաճառական Սաֆարեանի խանութը և դաշոյնով սպառնալով նրանից փող է պահանջում։ Ստանալով 8 րուբլի, Մահմէդը գնում է։ Կէս ժամից յետոյ յիշեալ պարսիկը նորից է վերադառնում Սաֆարեանի մօտ և նորից մերկացնելով դաշոյնը փող է պահանջում։

Սաֆարեանը զայրացած ատրճանակի գնդակի մի հարուածով վիրաւորում է պարսիկին ոտից։

Ատրճանակի ձայնից դուրս են վազում Սաֆարեանի հայրն ու եղբայրները և իրանք էլ ատրճանակ են արձակում խանութից դուրս եկող պարսիկի վրա։

Գնդակի ձայն լսելով մօտ է վազում հերթապահ գօրօդօվօյը և կալանաւորում վիրաւորված Մահմէդ Ալէքպեր օղլուն և ուղարկում հիւանդանոց։ Իսկ Սաֆարեան եղբայրները հետևանքից երկիւղ կրելով փակվում են իրանց խանութում։

Այդ միջոցին մի խումբ պարսիկ վաճառականներ, չը նայելով ցոյց տրված ընդդիմութեան, այնուամենայնիւ կարողացան մտնել Սաֆարեանի խանութը, ուր վիրաւորվել էր պարսիկը և ատրճանակներից մի քանի գնդակներ արձակեցին խանութի դռան ու պատուհանների, բայց օգնութեան հասան գօրօդօվօյները և շնորհիւ մի քանի խոհեմ թուրքերի միջամտութեան, յաջողվեց ցրել պարսիկ վաճառականների ամբոխը։

—

Սեվաստոպոլ, 29 յունիսի։ (Պաշտօնական Թղթակցից)։ Ծովակալ Չուխնինի դիակը պալատ բերվեց։ Յանցանքի մէջ կասկածվում է նաւաստի Ակիմովը և «Հօլանդիա» ամարանոցի պարտիզպանի օգնականը, պատահարի մօմենտին անյայտացել է։

(Հեռ. Գործ.)

—

Վաղարշապատ, 28 յունիսի

Երէկ, յունիսի 27-ին, Շորլու Խաչափարախ և Զօրանքեարայի թուրքերը, զինված արագաձիգ հրացաններով, անցեալի յոյսերով խրախուսված, ինչպէս ժողովրդական լեզուով ասում են «տաւարները արնոտած», յարձակվեցին Վաղարշապատի դաշտում աշխատաւորների և նախրի վրա։

Անմիջապէս դէպքի տեղը վազեցին պ. պրիստաւի առաջնորդութեամբ մի քանի կազակներ և ստրաժնիկներ։ Երիտասարդութիւնը, լցված անցեալի դառն փորձով, շտապեց դրանց յետևից։ Մի ակնթարթում խաղաղ դաշտը պատերազմի դաշտի վերափոխվեց։

Քաղհանաւոր կանանց և հնձւորների ուրախ լէյլէների փոխարէն երգեցին հրացանների համազարկերը, որոնք իսկապէս շատ մելամաղձոտ էին։ Մինչ երիտասարդութեան օգնութեան հասնելը, մերոնք, պ. պրիստաւը, ստրաժնիկները և կազակները, երեք կողմից պաշարված էին հարիւրաւոր թուրքերով։ Րոպէն կրիտիքական էր։ Երիտասարդութիւնը միանգամից արդարացրեց իր վրա դրված յոյսը։

6 ժամ անընդհատ կռուելուց յետոյ, թուրքերը կամաց կամաց յետ նահանջեցին դէպի իրանց գիւղերը, թողնելով իրանց դիրքերում մէկ դիակ և շատ ականատեսների ասելով 10—15 դիակները հետները տարան, իսկ մենք ոչ մի վիրաւոր չունեցանք, բացի պրիստաւի ձիուց, որը սպանվել էր սկզբից և 7 ձիու գողանալուց (2-ը ստրաժնիկներին է, 2-ը վանքինը և 3-ը երիտասարդներին, որոնք դէպքի տեղումը թողել էին և ոտքով կռւել. օգտվելով հանգամանքից թուրքերը փախցրել էին։

Ոստիկանութիւնը անմիջապէս հեռագրեց Երևան գեներալ-նահանգապետին դէպքի մասին և խնդրեց անմիջական օգնութիւն թուրքերից պաշտպանվելու։

Գաւառապետը բացակայ էր գիւղից։

Շնորհակալութեան արժանի է օր. Վ. Աւետիքեանի օրինակելի արարքը, որը տեսնելով իր եղբայրների դրութիւնը, հետը վերցնելով մեծ քանակութեամբ սառոյց, հաց և վիրակապեր, շտապեց դէպքի վայրը, որքան որ կարելի է օգնել և մխիթարել կռւողներին։

Թուրք խուժանը յետ նահանջելով իր վրէժը լուծեց «Նամարդավարի» այրելով մերձակայ հարևան հայ գիւղի ցորենի տեղերը։

Լսելով, Վէհափառը կարգադրել է, որ պրիստաւի սպանված ձիու փոխարէն Վանքի գոմանոցից մէկ լաւ ընծայեն նրան։

Պ. Աղազադեան

—

«Իրշադ» լրագիրը Երևանի իր սեփական թղթակցից ստացել է հետևեալ հեռագիրը.

Երևան-Բագու, յունիսի 27-ին։ Երէկ ժամի տասներկուսին, Էջմիածնի գաւառի հայերը Ղարաղշլաղ գիւղի վրա յարձակվելով տաւարները տարան։ Վիրաւորեցին երկու մահմեդական, փախցրին 44 սևատաւար։

—

Ալէքսանդրօպօլում հրացանաձիգ զօրավաշտում անկարգութիւններ ծագեցին շնորհիւ այն լուրերի, որ իբր քաղաք են բերվել մինգրէլցիներին պատժելու համար։ Հերթապահ օֆիցերը, որ աշխատել է համոզել զէնքերը վայր դնել, մի լաւ ծեծվել է հրացանի կոթով։ Տեղի են ունեցել ձերբակալութիւններ։ Կանչված զօրքը զինաթափ է արել սապեօրների մի մասին առանց արիւնհեղութեան։ Հաւաստիանալով ագիտատորների տարածած լուրերի սխալի մասին, բոլորը հանգստացել են։

(Հեռ. Գործ.)

—

Սեվաստոպոլ, 29 յունիսի։ Ծովապետ Չուխնինը ուշքի չը գալով գիշերվայ ժամը 1-ին հոգին աւանդեց...

«Հեռ. Գործ.»

—

Բաթում, 26 յունիսի

Երէկ գիշեր, ժամի մօտ 1-ին, քաղաքիս 3-րդ մասում 40-ի չափ հրացանի ձայն լսվեց. պատճառը դեռ պարզված չէ։

Այսօր առաւօտեան, ժամի մօտ $4^1/_2$-ին, քաղաքիս 3-րդ մասում, Գուրիայում ստրաժնիկների գլխաւոր Դիմիտրի Մգելաձէի վրա ռումբ նետեցին. առաջին ռումբը չէր պայթել, երբ Մգելաձէն սկսել էր հրացան արձակել փախչող ռումբ նետողի վրա, նա մի ռումբ էլ էր նետել, որը նոյնպէս չէր պայթել։ Ինչպէս պատմում են, Մգելաձէն, հետևելով ռումբ նետողին, մօտ 10—15 անգամ հրացան էր արձակել, բայց նրա գնդակներն էլ նետված ռումբերի պէս աննպատակ են անցել և հակառակորդներին աջողվել էր փախչել անվնաս։

Յիշեալ Մգելաձէն գուրիացի է։ Ինչպէս պատմում են, վերջին ազատարար շարժման ժամանակներում ոչ մի արարած այնքան չարիք չէ հասցրել Գուրիային, որքան Դիմիտրի Մգելաձէն. նոյնիսկ գեներալ Կրիլովի գործողութիւնները նսեմանում են նրա մասին պատմածների առաջ և այդ գլխաւորապէս նրա համար, որ, որպէս տեղացի, նրան յայտնի էին ամեն մի ծակուծուկ և ամեն մի գաղտնիք ու գործող անձնաւորութիւնները։ Պատմում են, թէ երբ նրան մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ նկատում էին, թէ ինչու է այնքան չարիք գործում, նա պատասխանում էր. «Ես գիտեմ, որ վաղ թէ ուշ ինձ սպանելու են գուրիացիք, ուրեմն ես ինչու պիտի խնայեմ նրանց. քանի դեռ կենդանի եմ, ինչ որ ձեռքիցս գայ—կանեմ. չանեմ էլ—միևնոյն է, արդէն անունս փիս է ու փիս»։

—

Բաթում, յունիսի 28-ին։

Յունիսի 26-ին քաղաքիս առաջին մասում ծառայող ոստիկան Կազիմիր Կօչմարսկին երեկոյեան դէմ փողոցով անցնելու ժամանակ երեք անգամ ատրճանակ արձակեցին վրան. գնդակներից միայն մէկն էր հասել նպատակին և ծանր կերպով վիրաւորել նրան։

Ատրճանակ արձակողներից ոչ ոք չէ բռնված։

Այսօր, ցերեկվայ ժամի մօտ 10-ին, ձայն տարածվեց, թէ զինւորների մէջ վերջին շարժումների պատճառով, որպէս յանցաւորներ, ականային վաշտից 16 զինւորներ էին բռնել և տանում բանտարկելու համար։

Երէկ մի շշուկ տարածվեց, որպէս թէ զինւորներից ժողովրդին ասող է եղել, որ ուրբաթ օրը, այսինքն վաղը, ամսիս 29-ին, հակառակ կողմի զօրքերի մէջ մեծ ընդհարում պիտի տեղի ունենայ։ Եթէ այդ ճիշտ լինի, որ ներկայ պայմաններում զարմանալի չէ, հասկանալի է, ի հարկէ, թէ ինչ կը լինի Բաթումի դրութիւնը, որպէս չորս կողմից պատած զօրանոցներով լի մի քաղաքի։ Վերջապէս գնալով այստեղ էլ են խառնում ամպերը և խիստ փոթորիկ գուշակել տալիս։ Րոպէն որքան լուրջ է, նոյնքան էլ կօմիքական է. ինչպէս ասում են շունը տիրոջը չէ ճանաչում...

Գ. Գրիգորեանց

## ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

### XXI

Այստեղ մենք չենք կարող մանրամասն կերպով առաջ բերել այն ծրագիրները, որոնք կարող են նպաստել գիւղական տնտեսութեան բարգաւաճելուն համայնական հողատիրութեան ժամանակ։ Ամփոփ կերպով մեր կարծիքը հետևեալն է։

Այն տեղերում, ուր հողը չէ պահանջում յատուկ բարւոքումներ և ընդհանրապէս միատեսակ է, հողերի յաճախակի բաժանումը ամենևին վնասակար չէ և շատ նպաստում է հողի արդիւնքների հաւասարաչափ դասաւորութեան։

Իսկ այնտեղ, ուր հողը պահանջում է առանձին խնամք, օրինակ մանրակրկիտ մշակութիւն, պարարտացում և ուրիշ բարւոքումներ, անհրաժեշտ է, որ մի հողաբաժանութիւնից մինչև միւսը ժամանակամիջոցը փոքր չը լինի, օրինակ հողը չը բաժանվի 2—3 տարին մի անգամ, ինչպէս այդ տեղի ունի հիւսիսում, այլ աւելի ուշ, օրինակ 6 տարին մի անգամ և էլ աւելի ուշ, որպէս զի հողատէրերը, որոնք ծախսեր են արել հողի վրա, կարողանան վերադարձնել իրանց ծախսերը և վարձատրել իրանց աշխատանքը։

Այդտեղ կարելի է նոյնպէս գործադրել և հետևեալ եղանակը. գիւղական հողը վերածել մի քանի գօտիների և նրանցից իւրաքանչիւրում որոշ կարգ հաստատել։ Բացատրենք մեր միտքը օրինակով։ Այն գիւղերում, ուր պարարտացվում է հողի մի մասը (օրինակ Ախալքալաքի և միւս գաւառներում), գիւղական համայնական հողը կարելի է բաժանել երկու մասի՝ պարարտացրածի և ոչ պարարտացրածի։ Առաջինը որ գտնվում է գիւղական տների մօտ և կոչվում է աղբին (հայերէն) կամ նաքուզարի (վրացերէն) անուններով, առհասարակ քիչ է ենթարկվում բաժանման, որովհետև գիւղացիները ցանկանում են իրանց ձեռքին ամուր պահել այն կտորները, որոնք պարարտացրած են և բարւոքված։ Իսկ ինչ վերաբերում է երկրորդ, աւելի հեռու ընկած, հողերին, որոնք չեն պարարտացրած, նրանց բաժանում են յաճախ և նրանց միջոցով լրացնում առաջին մասի պակասները։

### XXII

Ուրիշ դէպքերում, հողաբաժանութեան ժամանակ գիւղացիները աշխատում են կարելիին չափ թողնել իւրաքանչիւրի նախկին հողաբաժինը իր ձեռքին և միայն նրանց վրա աւելացնում են նոր կտորներ կամ նրանցից կտրում են աւելորդ կտորները հաւասարութիւն ձեռք բերելու համար։ Աւելացնելու և պակասացնելու այդ եղանակը այն յարմարութիւնը ունի, որ տակնուվրա չէ անում եղած տնտեսութիւնը և կարկատում է եղածը։

Ինչ վերաբերում է այն հողերին, որոնց վրա այգիներ են գծված կամ բազմամեայ կուլտուրաներ և մշակութիւններ են հաստատված, այդպիսիները պէտք է ազատ մնան բաժանման գործողութիւնից, քանի որ նրանց վրա գոյութիւն են պահպանում այդ կուլտուրաները։ Եւ եթէ պատահի, որ գիւղական հասարակութիւնը որ և է պայմանով հարկադրված լինի բաժանել այդ հողերը, այն ժամանակ նա պարտաւոր է տարիներ առաջ ծանուցանել և նախազգուշացնել այդ մասին և մշակէ վարձատրութեան որոշ կարգ այն ծախսերի համար, որ արել են առանձին գիւղացիները իրանց հողաբաժինների վրա։

Իսկ գիւղերի մէջ գործիքներ և տեխնիկական բարւոքումներ մտցնելու համար պէտք է նպաստել ընկերակցութիւնների կազմվելուն գիւղերում և ջանքեր անել հասարակական դրամական աջակցութեամբ կազմակերպել կրեդիտ, ապահովելու ապրանքների վաճառահանումը, պարզելու փորձերի միջոցով տնտեսական բարւոքումների ձևերը, և այլն։

### XXIII

Մի քանի համայնքներում գիւղական տնտեսութիւնը վնասվում է այն բանից, որ գիւղը չափազանց մեծ է և նրա հողերի մի նշանաւոր մասը այնքան հեռու է գիւղական տներից, որ առաջինը՝ չափազանց շատ մեծ ժամանակ է պահանջվում մարդկանց երթևեկութեան համար իրանց անասուններով և երկրագործական գործիքներով դէպի այդ հողերը և դարձեալ դէպի գիւղ, երկրորդ՝ իրապէս անհնարին է դառնում հեռաւոր հողերի պարարտացումը, երբ որ շատ դժուարանում է գիւղական նախիրների ամեն օր ուղարկելը դէպի հեռաւոր արօտները և, այլն։

Եւ հասկանալի է, թէ գիւղատնտեսական նպատակների համար ցանկալի պէտք է համարել աւելի մանր համայնական միութիւնների կազմութիւնը, որոնցից իւրաքանչիւրին անշուշտ կը տրվի գիւղական համայնական հողից համապատասխան տարածութիւնը։

Ճիշտ է, կան հիմնաւոր պատճառներ թէ ինչու շատ տեղ ազգաբնակութիւնը խմբված է խոշոր բազմամարդ գիւղերում. բայց եթէ մի տեղ մի անգամ գիւղական համայնքը եկել է այն եզրակացութեան, որ պէտք է բաժանվել մի քանի փոքր գիւղերի, այն ժամանակ վարչութեան կողմից պէտք է չը յարուցվեն ոչ մի արգելք և խոչընդոտ, մինչդեռ շատ յաճախ մենք լսում ենք գանգատներ, թէ նոր գիւղեր կազմելուն խանգարող է հանդիսացել վարչութիւնը, որը չէ ցանկանում աւելացնել իր հոգսերը և աւելացնել հսկողութեան կէտերը իրան յանձնված շրջանում։

Այնտեղ, ուր գիւղացիները ապրում են մեծ գիւղերով, նրանք աչքի առաջ ունեն որոշ յարմարութիւններ, և ծախսերի մէջ խնայողութիւններ, որոնցից յիշենք հետևեալները՝ գիւղական կառավարութեան, դպրոցական կազմի և հոգևոր պաշտօնեաների ապահովութիւնը, դպրոցի, եկեղեցու և վաճառանոցների շինութիւնները, հացի շտեմարանների և ուրիշ հասարակական հիմնարկութիւնների պահպանութիւնը։ Կան գիւղեր, որոնք անբաժան մնում են մի տեղում այն պատճառով, որ գիւղական հողի ոչ մի ուրիշ կէտում չը կայ այնպիսի լաւ և առատ ջրի աղբիւր, կամ թէ բնակիչները ապրում են մի այնպիսի տեղում, ուր ամբողջ շրջակայքում բնակված են թշնամի ազգաբնակութիւններ, որոնց յարձակումների դէմ նրանք կարող են դիմադրել միայն հաւաքական խիտ ոյժերով։

Բայց և այնպէս, երբ ինքը գիւղական հասարակութիւնը եկել է այն եզրակացութեան, թէ նա պէտք է բաժանվէ և կազմէ մի քանի փոքր գիւղեր, այն ժամանակ պէտք է ամեն տեսակ արգելքներ և դժուարութիւններ վերացվեն, որպէս զի ազգաբնակութիւնը հնարաւորութիւն ունենայ ինքը տնօրինել իր բաղդը և կեանքը և կարգաւորել իր ցանկացածի պէս իր տնտեսութիւնը։

Ա. Քալանթար

## ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Մինչդեռ «ագրարական հարցը» լուծվում է Պետական Դումայում, գիւղացիներն էլ իրանց ուզածի նման են վճռում նրան իրանց տեղերում։ Այդպէս, օրինակ, Լուբենեան գաւառի մի քանի մասերում գիւղացիները, առանց նախապէս որ և է պայման կապելու կալուածատէրերի հետ, հնձում ու խուրձ են անում նրանց խոտերը, իսկ յետոյ էլ խոտի կէս մասը թողնում են կալուածատիրոջը, իսկ միւս մասը կրում տանում են ու հաւասարապէս բաժանում «ագրարական հարցը» այդպէս գործնական կերպով լուծելու խնդրին բոլոր մասնակցողների մէջ: Նախկին տարիներում կալուածատէրերը հաւաքում էին իրանց խոտհարքները սովորաբար խուրձերի «եօթներորդ» «ութներորդ» և նոյնիսկ «իններորդ» մասերը:

Кiев. К. Ж.

—«Слово» լրագրին հեռագրում են Ռոստով-Դոնի վրայից, որ Ռոստովի շրջանի հողատէրերը խնդրամատոյց են եղել վճռական միջոցներ ձեռք առնել գիւղացիների կամայականութիւններին վերջ տալու համար, որոնք կալուածատիրական հողերում գործում են իբրև իրանց սեփականութեան վրա, վարվում են ինչպէս իրանք են ցանկանում:

—Տուլայից հեռագրում են «Рѣчь»-ին: մինիստր Սաւեջինսկու կնոջ կալուածքում ապրող գիւղացիները գիւղատնտեսական գործադուլ են յայտարարել: Պահանջ են յայտնել ամբողջ կալուածատիրական հողերը իրանց յանձնելու և ներկայ բերքից իւրաքանչիւր դեսեատինի համար 10 րուբլի զիջելու նրանց:

—Մցենսկու և հարևան Օրլովսկու գաւառում, «Рус. В.»-ի ասելով, ագրարական անկարգութիւնները սուր կերպարանք են ստանում: Առաջինում դուրս են հանում բանւորներին տնտեսութիւնից առանց ոչնչացնելու դաստակերտը, իսկ երկրորդում—Օրլովի գաւառում իշ. Սվեատապոլկ-Միրսկու դաստակերտը աւերված է ու հրդեհված: Բանը նրանումն է, որ Սվեատապոլկ-Միրսկու հողերը ծախված են Գիւղացիական բանկին, իսկ դաստակերտը կալուածատէրը պահել է իր ձեռքում: Մի ինչ որ պատճառով բանկը այդ հողերը ծախել է ոչ թէ տեղական գիւղացիներին, այլ բոլորովին կողմնակի անձանց: Գիւղացիները դրա պատճառը համարում էին կալուածատիրոջը, այդ պատճառով ոչնչացրին ու հրդեհեցին կալուածքը: Հրդեհողներից 4-ը կալանաւորված են: Էսկադրոնը բաւական չը համարելով նոր ուժեր են պահանջել: Մի քանի հազար հոգուց բաղկացած միտինգը քննում է իրերի դրութիւնը: Լիվենի գաւառից եկած պատգամաւոր Ալեխինը ծանօթացնում է իր գաւառի գիւղացիներին Դումայի նիստերի աշխատանքների՝ հետ, և դա հանգստացուցիչ ներգործութիւն է ունենում ագրարականութեան վրա, որը լիայոյս հաւատում է ու սպասում, որ Դուման ձեռք կը բերէ հող և կը վերացնէ ներկայ իրաւազրկութիւնը:

—Կուրսկից հեռագրում են Страна-ին, որ Դմիտրիեվսկի գաւառում Պրոխորովի, Մէյերի և Օգնովի կալուածքների գիւղացիները հնձեցին մարգագետինները և բաժանեցին խոտերը իրար մէջ: Կալուածատէրերը շտապում են քաղել լաւ դեռ չը հասած հաճարը, վախենալով որ գիւղացիները իրանք կը հնձեն: Գիւղացիները բանւորական օրավարձը նշանակել են 10 րուբլի և դրանից էժան բանողներին հեռացնում են գործից: Սուջանի գաւառի Սկորօդնի գիւղում գիւղացիները միաձայն որոշել են առաջարկել ուրեադնիկ Գորբաչէվին երկու օրվայ ընթացքում հեռանալ գիւղից:

—Պետերբուրգի բանուոր-քարտաշները առաջարկել են իրանց տէրերին մի շարք տնտեսական պահանջներ, օրավարձը աւելացնելու և աշխատանքի օրը կրճատելու մասին, սպառնալով, հակառակ դէպքում գործադուլ անել:

—Իբր լրացուցիչ երէկվայ Տամբովից ստացած հեռագրի, «Тамбовскій Голосъ» լրագրում կարդում ենք հետևեալը. Յունիսի 21-ին Տամբովում 7-րդ պահեստի վաշտի զօրանոցում զինուորների միտինգ կայացաւ: Երեկոյեան մօտ ժամը 6-ին զինախաղութեան հրապարակի վրա հաւաքվեցին զինուորները և բացեցին նիստը իրանց տնտեսական պահանջների քննութեամբ: Միտինգի սկզբին հաւաքվեցին 3-րդ դիվիզիօնի զինուորներ ամբողջ կազմով: Մշակելով և քննելով 36 կէտերից բաղկացած մի շարք պահանջներ, զինուորները խաղաղ, սուս ու փուս ցրվեցին իրանց զօրանոցները:

—Ֆինլանդական երկաթուղու Բէլօօստրով և Վիբորգ կայարանների մէջ եղած գծի վրա գործադուլ են արել բանուորները: Յայտնել են տնտեսական պահանջներ: Գնացքների երթևեկութիւնը կատարվում է կանոնաւոր կերպով:

—Յունիսի 22-ին Լէսնօյում կայացել է բանուորների, զինուորների և նաւաստիների միտինգ: Խօսել են ներկայ մոմենտի և բանւորական պատգամաւորների նոր խորհուրդ ընտրելու մասին: Ոստիկանութիւնը բացակայում է եղել, որի շնորհիւ միտինգը անցել է խաղաղ, առանց ընդհարումների:

—Ներկայումս Մոսկվայում գործադուլ անող բանուորների թիւը հասնում է 20 հազար հոգու:

—Յունիսի 20-ին Նոր ադմիրալտէյստվա գործարանում, ուր տեղի էր ունենում բանուորական միտինգ, ուղարկել են 85-րդ հետևակ Վիբորգեան գնդի 3-րդ վաշտի զինուորներին միտինգը ցրելու համար:

Զինուորները գալուն պէս, վաշտի առաջնորդ պրապորշչիկը առաջարկում է բանուորներին ցրվել, բայց վերջիններս չեն ցանկանում ու սկսում են հանգիստ կերպով լսել ճառախօսին: Պրապորշչիկը հրամայում է զինուորներին կրակել, բայց զինուորներն էլ չեն կատարում ու բանուորներին հաղորդում են, որ չեն կրակելու: Այդպիսով միտինգը վերջանում է բոլորովին խաղաղ: Երբ վաշտը վերադառնում է զօրանոց, քննութիւն է սկսվում հրամանը չը կատարելու մասին: Վաշտը յայտնում է, որ այսուհետև չէ կրակելու իր եղբայրների վրա: Իշխանութիւնը ուզում էր կալանաւորել մի քանիսին, բայց զինուորները վրդովվեցին և պահանջեցին իրանց բոլորին կալանաւորել: 3-րդ վաշտի հրամանատարը սպառնաց կոզակներով, բայց զինուորները պատասխանեցին, որ չեն վախենում նրանցից: Տեսնելով որ գործը լուրջ կերպարանք է ստանում, հրամանատարը սկսեց զինուորներին հանգստացնել և առաջարկեց յայտնել իրանց կարծիքները: Խօսակցութիւնը տևեց մօտ մի ժամ: Զինուորները յայտնեցին, որ իրանք էլ այնպիսի բանուորներ են, ինչպէս և նրանք, որոնք միտինգ են կազմել, որ, ծառայութիւնը վերջացնելուց յետոյ, պահեստի մէջ մտնելով նրանք ստիպված պէտք է լինեն գնալ գործարանները աշխատելու, իսկ այն բանուորները, որոնց վրա այժմ զինուորներին ստիպում են կրակել, իրանց դուրս կը ձգեն գործարանից, ասելով որ իրանց մնում է ընկած ընկերների արեան հետքերը: Իշխանութիւնը դրված էր անել վիճակի մէջ մի այդպիսի հասարակ լօգիկայի պատճառով: Գիշերը հրամանատարի հետ զրուցող զինուորներին կալանաւորում են ու բանտ նստեցնում: Յուն. 27-ի առաւօտը, երբ զինուորները իմանում են իրանց ընկերների կալանաւորութեան մասին, սկսում է քննել, թէ ինչ միջոցներով ազատեն նրանց. այդ միջոցին ներս է մտնում գնդապետ Բօժէրեանովը ու նոր հարցաքննութիւն սկսում: Զինուորները չեն պատասխանում: Գնդապետը հայհոյում է զանազան յիշոցներով ու սպառնալիքներով հեռանում: Նրանցից 34 հոգի զինաթափ են արված ու հսկողութեան տակ դրված: Յունիսի 22-ին 9-րդ վաշտի հրամանատարը հաւաքում է իր վաշտի զինուորներին և սկսում ճառախօսել 3-րդ վաշտի անհնազանդութեան առիթով, որ նրանք հրաժարվել են կրակել, արատաւորել են ամբողջ գունդը, և հաղորդում է, որ 3-րդ վաշտի փոխարէն իրանք են ուղարկվում նոր ադմիրալտէյստվօն: «Ես յոյս ունեմ, եղբայրներ, որ դուք անխօս կը կատարէք իշխանութեան հրամանը, եթէ նրանք հրամայեն կրակել.» «Ամենևին ոչ».—պատասխանում են եղբայր-զինուորները: Հրամանատարը զայրանում է: «Ո՞վ է կրակելու, դուրս եկ»—գոռում է նա: Զօրքի շարքերից դուրս է գալիս միայն մի զինուոր: Գլխաւորը լուռ դուրս է հանում ծոցատետրը, գրում զինուորների անունները և ուղարկում վաշտը նոր ադմիրալտէյստվօն:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

Եգիպտոս ի Գահիրէ քաղաքում, Պօղոս Նուբար փաշայի նախագահութեամբ հիմնված է «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անունով մի ընկերութիւն, որի նպատակն է «Արևելքի հայ ժողովրդի մտաւոր և բարոյական զարգացմանը նպաստել, նրանց նիւթական կացութիւնը բարւոքելու օժանդակել և այս արդիւնքը առաջ բերելու ծառայող որևէ հրատարակութիւն քաջալերել»:

Ընկերութիւնը հետամուտ չէ ամենևին որևէ քաղաքական նպատակի:

Ընկերութեան վարչութեան (որի նախագահն է Պօղոս-Նուբար փաշա) մեզ ուղարկած հրաւէրը մանրամասն բացատրում է նոր ընկերութեան կազմութեան հանգամանքները և նպատակը:

Ահա այդ հրաւէրը, ուղղված ամբողջ հայ ազգին:

«Շատ տարիներէ ի վեր զգալի եղած էր Հայկական Ընդհանուր Միութեան մը պէտքը:

Վերջերս մեր Ռուսահայ եղբարց ենթարկված դառն կացութիւնը մի անգամ ևս հաստատեց թէ՝ Հայ ազգը կը կարօտի մի այնպիսի կազմակերպութեան, որ կարենայ դժբաղդ պատահարներու միջոցին նիւթական և բարոյական օգնութիւն հասցնել մեր հայրենակցաց, ինչպէս որ ըրաւ հրէական Ալիանս Իզրայէլիթ Ընկերութիւնը, Ռուսիոյ Հրէից կոտորածներուն առթիւ՝ դրամական մեծաքանակ նպաստներ զրկելով անոնց:

Որ և է աղէտէ արկածելոց ընծայուած օգնութիւնն այնչափ աւելի օգտակար կըլլայ՝ որչափ աւելի փութով հասնի: Ամեն անգամ որ Հայաստանի մէջ ծագի նոր աղէտ մը, ինչպէս սով կամ երկրաշարժ, համաճարակ կամ հրդեհ, հեռաւոր երկիրներ գտնուող հայեր կը յուզուին, կը միանան և հանգանակութիւններ կատարելով քիչ կամ շատ դրամ կը ղրկեն կարօտելոց. սակայն մինչև որ այդ նպաստները իրենց տեղը հասնին՝ հազարաւոր ընտանիքներ կը մնան անխնամ ու անպաշտպան, և զոհ կերթան ցուրտի, անօթութեան և հիւանդութեանց:

Տխուր ճշմարտութիւն մ'է նաև որ Հայրենիքի հողի վրա ապրող մեր արենակիցները դարաւոր դժբաղդութեանց հետևանօք հասած են նիւթական և բարոյական չքաւորութեան այնպիսի վիճակի մը՝ որոյ հանդէպ կարելի չէ անտարբեր մնալ իբր հայ և իբր մարդ:

Ուրեմն Հայ ազգը անհրաժեշտ պէտք ունի կազմակերպեալ միայնուն մարմնոյ մը, որ միշտ պատրաստ գտնուի օգնելու Հայաստանի հայ ժողովրդեան՝ առանց կրօնի խտրութեան. և ուրախ ենք ներկայ յայտարարութեամբ ծանուցանելու թէ՝ այս տեսակ մի մարմին հիմնըված է ի Գահիրէ, «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անուամբ, որուն նպատակն է ըստ տրամադրութեան ներկայիս կցորդեալ կանոնագրի՝ մեր Հայաստանի եղբարց անմիջական օգնութեան հասնիլ, ամեն անգամ որ պէտք մը գոյանայ, և միանգամայն նպաստել անոնց տնտեսական և կրթական ընդհանուր վիճակի բարելաւման:

Ուրեմն, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնն զուտ բարեգործական մի հաստատութիւն է, առանց քաղաքական հանգամանաց, որ ըստ կարելւոյն պիտի հետևի Ալիանս-Իզրայէլիթի գործունէութեան եղանակին:

Այսպիսի ազնիւ ու մեծ նպատակի գործադրութիւնը կը պահանջէ դրամական առատ աղբիւրներ: Ուստի հրաւէր կը կարդամք ամեն երկրի հայերուն որ փութով անդամակցին Միութեանս, և իրենց նուէրներով և ամսաթոշակներով նպաստեն կարևոր դրամագլուխ մը կազմութեան:

Յուսամք թէ ամեն ճշմարիտ և զգայուն հայ, առանց խտրութեան կրօնի և սեռի, խանդավառութեամբ պիտի ողջունէ Միութեան ծնունդը, պիտի ըմբռնէ անոր նշանակութիւնը, և սրբազան պարտականութիւն պիտի համարի անդամակցիլ անոր և օժանդակել անոր զարգացման ու ծաւալման:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնն մի գործնական ապացոյց թող լինի որ աշխարհիս մէջ ցրուեալ հայերն՝ կարող են միաբանիլ ազգային բարօրութեան առաջնորդող մի նպատակի համար»:

Նոր ընկերութիւնը, ինչպէս պէտք էր յուսալ, ողջունվեց ամեն կողմից համակրութեամբ: Մանաւանդ մեծ համակրանքով ընդունեց եգիպտական կառավարութիւնը, որ փութաց իր վաւերացումն տալ ներքին գործերի մինիստր Մուստաֆա Ֆէհմի փաշայի բերանով: Ահա նրա նամակը.

«Վսեմաշուք Տեարք Պօղոս փաշա Նուբար և Նագուբ փաշա Արթին.

Պատիւ ունիմ ծանուցանել Ձեզ թէ ստացած եմ Ձեր ապրիլ 12 թուակիր նամակը, որով բարեհաճած էք ինձ յղել «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անուամբ Ձեր հիմնած Բարեգործական Ընկերութեան Կանոնագրէն օրինակ մը:

Իրաւունք ունիք խորհելու թէ Կառավարութիւնն ամենամեծ բարեհաճակամութեամբ միայն կրնար նկատել այսպիսի հաստատութիւն մը, որուն գերազանցօրէն և բացարձակապէս մարդասիրական հանգամանքը՝ գովեստի միայն արժանի է:

Կը շնորհաւորեմ զՁեզ որ Հայոց նիւթական և բարոյական վիճակի բարելաւման հոգածու կը գտնուիք, և Կառավարութիւնն ընդունելով այդ գործին օգտակարութիւնը՝ յաջողութիւն կը մաղթէ անոր:

Հաճեցէք ընդունիլ, Վսեմաշուք Տեարք, մեծարանացս հաւաստիքը:

Ստոր. Մուստաֆա Ֆէհմի

Լուսաւոր, առաջադէմ կառավարութիւնները այսպէս գիտեն, միշտ խրախուսել իրանց հպատակների և քաղաքացիների ինքնօգնութեան գործերը և ձեռնարկութիւնները,

Հարկ չը կայ ասել, որ հայերի մէջ վաղուց զգացվում էր այդպիսի մի ընդհանուր Բարեգործական Ընկերութեան գոյութեան անհրաժեշտութիւնը և յաճախ զանազան տեղերում ջանքեր են եղել իրագործել այդ ձգտումը: Եւ այնպիսի մի ընկերութիւն պէտք է հիմնվէր Եգիպտոսի պէս մի ազատ երկրում, այդ հայ տարրը թէ իր քանակով և թէ բարգաւաճ կացութեամբ աչքի ընկնող տեղ է գրաւում: Նոր ընկերութիւնը մտադիր է ճիւղեր հիմնել երկրագնդիս զանազան հայաբնակ երկիրներում և այդ նպատակով դիմումն է արել և մեզ՝ որպէս զի Ռուսաստանում ևս հիմնենք նրա ճիւղը: Շատ ցաւում ենք, ի հարկէ, որ Ռուսաստանում տիրող այժմեան օրէնքները թոյլ չեն տալիս մեզ իրագործել այդ փափագը, բայց մենք հաւատացած ենք, որ Ռուսաստանի հայերը անտարբեր չեն մնայ և կը փութան աջակցել մի ընկերութեան, որի գործունէութիւնը համազգային է լինելու: Ի հարկէ, երբ Ռուսաստանը կը ստանայ աւելի ազատ օրէնքներ, այն ժամանակ մենք հնարաւորութիւն կունենանք հաստատել այդ ճիւղը:

Մեր կողմից կատարեալ աջողութիւն մաղթելով նոր ընկերութեան թոյլ կը տայինք մեզ մի համեստ խորհուրդ: Մեր կարծիքով, նոր Միութիւնը առաջ իր ուշադրութեան հոգսերի առարկայ պէտք է դարձնէ Թիւրքիայի և Պարսկաստանի հայերի կրթական և տնտեսական վիճակի բարւոքումը:

Հ. Առաքելեան

## ԳԵՂՑԻԿ, ԲԱՅՑ ԱՊԱՐԴԻՒՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Աւելորդ է ասել, թէ որ աստիճան եւրոպական մամուլը հետաքրքրված է Ռուսաստանի ներկայ կրիզիսով: Նրանք լարված ուշադրութեամբ օր օրի վրա հետևում են, թէ ինչ է կատարվում Պետերբուրգի բարձրագոյն շրջաններում: Եւ պէտք է ասել, որ եւրոպական թերթերը, իրանց վերին աստիճանի հմուտ և ճարպիկ թղթակիցների շնորհով, շատ աւելի շուտ և աւելի հաստատ տեղեկութիւններ են միշտ ունենում մեր մայրաքաղաքի գործերի վերաբերեալ, քան մենք, Ռուսաստանում ապրողներս:

Ինչպէս գիտեն ընթերցողները, վերջին երկու շաբաթվայ ընթացքում խիստ յամառ կերպով լուրեր են պտտում, թէ Գորեմիկինի մինիստրութիւնը հրաժարվելու վրա է, թէ շուտով նոր կաբինէտ պէտք է կազմվի, և նոյնիսկ մատնիշ են անում այն անձնաւորութիւնները, որոնք նոր մինիստրութեան կազմի մէջ պէտք է մտնեն:

Ահա թէ ինչ է գրում այդ խնդրի առիթով ֆրանսիական «Temps»-ը իր վերջին առաջնորդներից մէկում.—

«Պետերբուրգի պաշտօնական շրջաններից մեր ստացած հաստատ տեղեկութիւնների հիման վրա կարող ենք ասել, որ երբեք բարձրագոյն իշխանութեան տատանումները մինիստրական խնդրի վերաբերեալ այնքան խիստ չեն եղել, ինչպէս այժմ: Եւ կարող ենք ասել, որ այդ տատանումները երբեք մեզ այնքան վտանգաւոր չեն երևացել իրանց հետևանքներով, ինչպէս ներկայումս, որովհետև եթէ հէնց այժմ դեռ էլի հնարաւոր է մի բարեյաջող ելք գտնել ներկայ կրիզիսին, տասն և հինգ օրից յետոյ դա նոյնիսկ անհնարին կը լինի:

«Ներկայ բօլէում արքունական շրջաններում նոր կաբինէտ կազմելու դիտաւորութիւնից հեռու չեն, միայն թէ մինիստրական պորտֆէլներից երեքը՝ այն է՝ զինուորական, ծովային և արտաքին գործերի, չինովնիկների ձեռքում միայն: Ճիշտ է, այդպիսի կոմբինացիան հազիւ թէ Դումայի կողմից մի առանձին համակրութիւն գտնի, որովհետև Դումայում զինուորական մինիստրի համար մի այնպիսի ականաւոր թեկնածու կայ, ինչպէս Կուզմին-Կարավաևն է, որը ներկայումս զինուորական գործերի ամենայարմար վարողը կարող էր լինել: Միւս կողմից, կառավարութեան Պետ. Դումայի հաշտվելուն կարող են արգելք հանդիսանալ այն անզգոյշ խօսքերը, որ մի քանի օր սրանից առաջ պ. Իզվօլսկին ասաց Դումայի հասցէին: Այնուամենայնիւ եթէ բարձրագոյն իշխանութիւնը վճռի կադէտների կուսակցութեան ղեկավարներից մէկին ու մէկին դիմել, առաջարկելով պարլամենտական կաբինէտ կազմել, հաշտութիւնը դեռ էլի հնարաւոր կը լինի, նոյն իսկ վերոյիշեալ կոմբինացիայի պայմաններով:

«Մինչդեռ,—շարունակում է թերթը,—երկու կամ երեք շաբաթից յետոյ երկրի դրութիւնը կարող է արմատականապէս փոխվել: Չը պէտք է ուրանալ, որ կադէտներին շատ դժուար կը լինի իրանց դերը մինչև վերջը տանել: Նրանք չափազանց շատ են, որպէսզի կարելի լինի անորոշ ժամանակով իրանց գործունէութեան մէջ կատարեալ համերաշխութիւն պահպանել: Ինչպէս մենք արդէն մատնանշել ենք, նրանց շրջանում երկու հոսանք է նկատվում—մէկը դէպի ձախ, միւսը դէպի աջ: Եթէ ձախակողմեան կադէտները համոզվեն, որ աջակողմեանների չափաւորութիւնը բոլորովին անօգուտ է, որ կառավարութիւնը ոչ մի զիջում չէ ուզում անել, որ բիւրոկրատիան իր անհաշտ դիրքը ամուր է պահում, այն ժամանակ աջակողմեանների դրութիւնը շատ խախուտ կը դառնայ և նրանց ազդեցութիւնը միանգամայն կոչնչանայ: Ձախակողմեան կադէտները, որ յաճախ ձեռք ձեռքի տված էին ընթանում աշխատաւոր խմբի հետ, այն ժամանակ իրաւունք կունենան աւելի սերտ համաձայնութեան մէջ մտնել այդ խմբի հետ և այդ պարագայում Դումայի մեծամասնութիւնը կը տեղափոխվի կառավարութեան համար բոլորովին ոչ ցանկալի ձևով: Իսկ եթէ այդ համաձայնութիւնը կայանայ, այն ժամանակ ոչ միայն երեք չինովնիկների պորտֆէլներ տալով, պարլամենտական կաբինէտ կազմելու հնարաւորութիւնը կանհետանայ, այլ և կադէտները ստիպված կը լինեն երկու կամ երեք պորտֆէլներ աշխատաւոր խմբի անդամներին տալ: Զգում են արդեօք Պետերհոֆում երկրի դրութեան ամբողջ լրջութիւնը, զգում են արդեօք այն անելանելի դրութիւնը, որի մէջ մօտ է ընկնելու կառավարական քաղաքականութիւնը:

—Իշխան Ուրուսովի ճառը վճռողական հարուած հասցրեց բիւրօկրատիական թէ անցեալ, թէ ներկայ և թէ ապագայ մինիստրութիւնների հեղինակութեանը: Փաստերը ձեռքում իշխանը ցոյց տվեց, որ անհրաժեշտ է ամբողջ սիստէմը արմատականապէս նորոգելու ենթարկել: Ճիշտ է, նա կասկած յայտնեց, որ հազիւ թէ պարլամենտական մինիստրութիւնը կարողանայ յաջողութեամբ կռւել ադմինիստրացիայի անհնազանդութեան դէմ, բայց և այնպէս այդպիսի մինիստրութիւն կազմելու փորձը միանգամայն ձեռնտու է միապետի շահերի տեսակէտից:

«Անկասկած է, որ զինուորական խլրտումները աւելի ևս թուլացրին կառավարութեան ուժերը: Երբ մեքենայի բոլոր մասերը հերթով հրաժարվում են աշխատելուց, այդ ժամանակ մասնակի կարկատումները թէ անօգուտ և թէ շատ թանկ են նստում: Այդպիսի պարագաներում անհրաժեշտ է լինում ամբողջ մեքենան փոխել: Եւ որչափ միապետը շուտ ըմբռնի այդ բանը, այնչափ աւելի լաւ պահպանված կը լինեն թէ երկրի և թէ տոհմի շահերը»:

Ինչպէս տեսնում էք, ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, հէնց նոյնիսկ բիւրօկրատիայի շահերը պաշտպանելու տեսակէտից, անդադար խորհուրդներ է տալիս նրան, բիւրօկրատիային, իսկ սա նոյնիսկ անընդունակ է դառել այդ խորհուրդները ըմբռնելու: Հետաքրքիր է իմանալ, թէ արդեօք եւրոպացիներին ծանօթ է այն ժողովրդական առածը, որ ասում է՝ «Երբ Աստուած ուզում է մէկի ձեռքից հարստութիւնը խլել, ամենից առաջ նրան խելքից է զրկում:»

Ռ.

## ԱՆԻԻ ԺՈՂՈՎԸ ԵՒ ՇԻՐԱԿԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Դեռ նոր էի գիւղ վերադարձել արևան հայրենիքից, երբ իմացայ, որ Անիում Միքայէլ վարդապետը՝ աւերակների այդ անշուք հերոսը՝ ամսիս 18-ին ժողով է հրաւիրել շրջակայ գիւղերի գիւղացիներից մի քանի աչքի ընկնող անձնաւորութիւններ: Ենթադրելով որ խնդիրը ազգային-հասարակական բնաւորութիւն պէտք է ունենայ կամ Անիի պաշտպանութեան մասին պէտք է խօսվի, պարտք համարեցի, թէև ոչ հրաւիրված, շտապել Անի, մանաւանդ որ գիւղացիներից ոմանք ինձ հաղորդեցին՝ թէ «էդ գիտնական Մառ են ըսըմ ինչ են ըսըմ շատ բաներ է գրել, ըսըմ են թէ մէ թաժժա ճարըմ (ջահ) է գտել»: Այդ «ըսըմեն»-ները աւելի ևս շարժեցին իմ հետաքրքրութիւնս և ևս շտապեցի ժամ առաջ տեսնել այդ «շատ բաները»:

Դժբախտաբար աւերակների անշուք հերոսը Անիում չէր, բայց հրաւիրվածները բոլորն էլ եկել էին. վերջին հանգամանքը արժէ ընդգծել իմանալու համար, որ Շիրակի գիւղացին էլ զուրկ չէ հասարակական բնաւորութիւն կրող հարցերով հետաքրքրվելու ընդունակութիւնից: Այդ փոքրիկ ժողովը՝ կազմված «փոքրիկ մարդկանցից», քաղաքների ժողովների նման չէր, որ սովորաբար անվերջ կրկնվում է տաղտկալի «յետաձգվում է»-ներով. գիւղացիք վերաներով ճանապարհ էին եկել իմանալու, թէ ինչ կասէ Միքայէլ վարդապետը:

Մեծ. պ. Թ. Թորամանեանի, Անիի պեղումների անխոնջ սիրահար ճարտարապետի նախագահութեամբ բացվեց ժողովը. նախ պ. Թորամանեան հակիրճ կերպով և գիւղացիներին մատչելի լեզուով բացատրեց, թէ ինչ մեծ և անգնահատելի նշանակութիւն ունի մեր պապերի ջանքերով կանգնեցրած, իսկ այսօր աւեր կամ կիսաւեր դրութեան մէջ գտնված պատմական յիշատակարանների, այդ անմահ յուշարձանների պահպանութեան խնդիրը բացատրել այդ կիսականգուն բեկորների պատմական, ճարտարապետական, գիտական-գեղարուեստական և կուլտուրական նշանակութիւնը, ապա յայտնեց, որ իր և Միքայէլ վարդապետի խնդրանօք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը առանձին գրութեամբ կարգադրել է շրջակայ գիւղերի բնակիչներից կազմել մի հոգաբարձութիւն, որի սեպուհ պարտականութիւնն է լինելու՝ հսկել Շիրակի աւերակների վրա ընդհանրապէս և Ղօշավանքի (հին Հոռոմոս) վանքերի վրա մասնաւորապէս, որպէս զի այդ աւերակները ագէտ վարդապետի (Իմա Շիրակունի) և ագէտ գիւղացիների ձեռքով չը ոչնչանան, աւեր ու մարագ չը դառնան:

Ժողովականներից մէկը պ. Թորամանեանից անմիջապէս յետոյ յայտնեց բոլորի կողմից իրանց ուրախութիւնը այդ առիթով, իսկ երբ ժողովի անդամ ղօշավանքցի պ. Յովհաննէսը կենդանի և դրական փաստերով ներկայացրեց Ղօշավանքի տիրահեծակ Շիրակունի վարդապետի անխիղճ վերաբերմունքը դէպի նոյն գիւղում գտնված աւերակները, ժողովը միահամուռ իր զայրոյթն ու դժգոհութիւնը յայտնեց այդ ամեն կողմից անպէտք, ագէտ վարդապետին, որ, իբրև պահապան յիշեալ աւերակների, փոխանակ պահել պահպանելու, շէնացնելու, աւելի ու աւելի նպաստում է նրա շուտափոյթ քայքայման և անհետացման, որ մարագ է դարձրել Աշոտ ողորմածների դամբարաններին կից և նրանցից ոչ շատ հեռու գտնված վանքերը և զարման ու խոտ է լցրել այնտեղ:

Բուն խնդրի քննութեան անցնելիս պէտք է տեսնէիք, թէ ինչպէս այդ համակրելի փոքրիկ մարդկանցից ոմանք իրանց կէս գրական կէս գաւառական բարբառով աշխատում էին հաստատել, թէ որքան անհրաժեշտ է ունենալ այդպիսի մի հոգաբարձութիւն, ոմանք մինչև իսկ ցաւ էին յայտնում, որ հիմա, այդքան ուշ է կազմվում այդ հոգաբարձութիւնը, մինչդեռ շատ ու շատ ցանկալի էր, որ հոգևոր իշխանութիւնը, որ ի պաշտօնէ կոչված է այդ բանի համար, տարիներ առաջ այդ միտքը յղանար և գործի ձեռնարկէր:

Երկար խորհրդածութեան նիւթ դարձաւ հոգաբարձութեան ընտրութեան եղանակի հարցը, այսինքն ինչպէս պէտք է կազմել այդ հոգաբարձութիւնը. արդեօք թողնել գիւղացիներին, որ իրանք իրանց միջից ընտրեն, թէ թողնել հոգևոր իշխանութեան տրամադրութեանը և Միքայէլ վարդապետին, իբրև շրջանի գիւղացիներին լաւ ճանաչողի, որ սրանք իրանց կողմից նշանակեն յարմարներին:

Չը նայած այն հանգամանքին, որ մենք ապրում ենք ընտրողական սկզբունքը իրացված ժամանակում, երբ ամեն մի անհատ ուզում է իր քաղաքացիական իրաւունքներից օգտվել, բայց ի նկատի ունենալով մի շարք խիստ ծանրակշիռ հանգամանքներ, նպատակայարմար համարվեց առաջին հոգաբարձութիւնը, իբրև սկսնակ, նշանակովի անել, թէև բոլորս էլ պ. Թորամանեանի հետ միասին սկզբունքով դէմ չէինք ընտրութեանը. այստեղ մի առ մի աւելորդ եմ համարում թուել այդ ծանրակշիռ հանգամանքները. բայց ընթերցողներին գաղափար տալու համար այն հայեցակէտի մասին, որով առաջնորդվեց ժողովը հոգաբարձութիւնը կազմելու նկատմամբ՝ արժէ յիշատակել հետևեալ փաստը, որ պաշտպանում էին ոմանք աջող թեկնածուներ կամ հոգաբարձուներ ստանալու համար:

Նախ որ այս գործի համար հարկաւոր է քիչ թէ շատ կրթված և աւերակների, հնութիւնների արժէքը հասկացող, գնահատող և սիրող մարդ, մի հանգամանք, որով այնքան էլ չէ կարող պարծենալ Շիրակը. միւս կողմից ընտրելին պէտք է լինի այն գիւղից, որի սահմաններում գտնվում են աւերակները կամ այն գիւղից, որտեղ գտնվում են հնութիւնները, որպէս զի սրանք հնարաւորութիւն ունենան շարունակ հսկելու և չը թողնելու, որ գիւղացիք քանդեն ու փչացնեն. ուրեմն վերոյիշեալ հանգամանքը անպայման ընտրողական սկզբունքի մէջ սահմանափակութիւն է մտցնում. այս մի կողմից. միւս կողմից էլ որ մեր գիւղացիների մէջ խիստ մեծ չափով զարգացած է թայֆայութիւնը և, որ ամենից գլխաւորն է, սակայն դառն և բնական փաստ, չեն սիրում կրթվածներին և ուսումնականներին. իսկ ընտրութիւնների ժամանակ արժանաւորների համար ագիտացիա անելու մասին խօսելն անգամ աւելորդ է և ծիծաղելի: Հոգաբարձութիւն կազմելու խնդիրը մի քանի օրվայ հարց է հարկաւոր է ունենալ նախ մի փոքրիկ կանոնագրութիւն, որով պէտք է որոշվի դերն ու իրաւունքները, որով պէտք է առաջնորդվի նորակազմ հոգաբարձութիւնը: Այդ կանոնագրութիւնը և հոգաբարձական ապագայ կազմի անուանացուցակը պէտք է ուղարկվեն Վեհափառ Հայրապետին ի հաստատութիւն, որից յետոյ հոգաբարձութիւնը կը մտնի իր պատասխանատու դերի մէջ:

Ցանկանալով նորակազմ հոգաբարձութեանը կատարեալ աջողութիւն, աւելորդ չեմ համարում մի քանի հանգամանքների վրա հրաւիրել նրա և հայ ժողովրդի ուշադրութիւնը: Հոգաբարձութիւնը թող ի նկատի ունենայ, որ ստանձնում է մի գեղեցիկ և քաղցր պարտականութիւն, մի պարտականութիւն, որի գիտակցութիւնը պէտք է ոգևորէ նրանց և առաջ մղէ դէպի այդ ազգօգուտ գործունէութիւնը: Հոգաբարձութիւնը կարող է իր գործի աջողութիւնը պայմանաւորել մի քանի տեսակէտից. նախ նա պէտք է կարգ ու կանոն մտցնէ Ղօշավանքի վանքերի մէջ. ունենայ իր կնքված և վաւերացված մատեանը, որ հազարաւոր ճանապարհորդների կամովին, յօգուտ այդ գործի, տուած նուէրները հաշուով պահվեն և յօգուտ նոյն աւերակների վերաշինութեան գործադրվեն. երկրորդ կանոնաւոր հսկողութիւն ունենալ Ղօշավանքի եկամուտների վրա և թոյլ չը տալ, որ ինչ որ Շիրակունիներ իւրացնեն և ըստ իրանց քմահաճոյքի գործադրեն. մասն հանել այդ եկամուտներից նոյն նպատակին ծառայեցնելու համար: Վերջապէս դիմումներ անել, կոչեր հրատարակել, դրամանքներ սարքել և հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել, որպէսզի նա իր նիւթական օժանդակութեամբ նպաստէ մեր պատմական հնութիւնների պահպանութեանը: Այս և նման միջոցներով, հաւատում ենք, ժամանակի ընթացքում կը կազմվի աւերակների պահպանութեան համար մի խոշոր ֆոնդ:

Իսկ հասարակութիւնը թող անտարբեր չը մնայ դէպի այս աւելի քան անհրաժեշտ և կարևոր գործը և շտապէ իր նիւթական և բարոյական օգնութիւնը ցոյց տալու, որով ապացուցած կը լինի, որ այո, յիրաւի յարգում է իր պապերի յիշատակը, և քաղաքակիրթ ժողովուրդ է:

Ա. Հայրապետեան

## ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

### ԺԳ. նիստ

Ուսուցչական համաժողովի ժգ. նիստը բացվեց ամսիս 30-ին, առաւօտեան ժամը $9^{1}/_{2}$-ին, նախագահութեամբ պ. Ի. Յարութիւնեանի:

Նախագահի առաջարկութեամբ կարդացվում և մի քանի փոփոխութիւններով հաստատվում է համաժողովի նախորդ նիստերի արձանագրութիւնը:

Ապա ժողովը անցնում է ուսուցչական պրոֆեսիոնալ միութեան կանոնագրութեան մասնաժողովի կողմից մշակված միւս յօդուածների մանրամասնութիւնների քննութեան:

Ժողովականների ձայնից բազմութեամբ անցնում է մասնաժողովի առաջարկած հետևեալ յօդուածները.

է) Միութիւնը իր անդամներին հասցնում է իրաւաբանական օգնութիւն և կազմակերպում է պատիւ և միջնորդ դատարաններ:

ը) Միութիւնը իրաւունք ունի ձեռք բերել անշարժ գոյքեր:

թ) Միութիւնը ունի առանձին կնիք այս վերնագրով. «Ռուսահայ դպրոցների ուսուցչական Միութիւն»:

ժ) Միութիւնը կարևոր դէպքերում իրաւունք ունի լրացնել կամ փոփոխել սոյն կանոնագրութիւնը:

Միութեան միջոցները

§ 3. Միութեան միջոցները կազմում են.

ա) Անդամակցական վճարներ (вступительные взносы):

բ) Անդամավճարներ (членскіе взносы):

գ) Տոկոսներ և եկամուտներ Միութեան ունեցած գումարներից և շարժական կայքերից:

դ) Նուիրաբերութիւններ:

ե) Կողմնակի արդիւնքներ՝ թատերական ներկայացումներից, երեկոյթներից, պարահանդէսներից, բարեգործական վաճառքներից, հրապարակական դասախօսութիւններից, գրական երեկոյթներից և այլն:

Միութեան գումարների բաժանումը

§ 4. Միութեան գումարները բաժանվում են.

ա) Ընթացիկ գումարների:

բ) Յատուկ գումարների:

Յատուկ գումարները (специальные фонды) գոյանում են՝

ա) Որոշ նպատակով նուիրած գումարներից և նրանց տոկոսներից:

բ) Միութեան եկամտի մի որոշ մասից:

գ) Յատուկ նպատակով արված ներկայացումներից, դասախօսութիւններից, երեկոյթներից և այլն:

Միութեան կազմը, անդամների իրաւունքները և պարտականութիւնները:

§ 5. Միութիւնը կազմում են՝

ա) Իսկական անդամները:

բ) Միութեան անդամ կարող են լինել ռուսահայ դպրոցների այն ուսուցիչները և ուսուցչուհիները, որոնք անդամ մտնելու միջոցին պաշտօնի մէջ են գտնվում:

Ծանօթութիւն: Ռուսահայոց դպրոցներ ասելով պէտք է հասկանալ ծխական, թեմական և առհասարակ եկեղեցական դպրոցները:

գ) Իսկական անդամը պարտաւոր է վճարել յօգուտ միութեան դրամարկղի՝ անդամակցական վճար մէկ րուբլի:

Նիստի շարունակութիւնը կը լինի այսօր երեկոյեան ժամը 6-ին:

Այսօրվայ նիստը համեմատաբար աւելի կանոնաւոր անցաւ, քան երէկվանը, երբ նիստի երկրորդ մասին նախագահելուց հրաժարվեց պ. Ի. Յարութիւնեանը,

Նիստը ցրվեց ժամը $2^{1}/_{2}$-ին:

Լ. Բ.

## ՎԵՐՋ ՉԸ ԿԱՅ

Մէկ ու կէս տարի արիւն է հոսում Կովկասեան անմատչելի լեռներում ու տափարակներում: Խոր ձորերի մէջ թէ խիտ անտառներում ընկած են ցան ու ցիր վայրենիների խելագար վրիժառութեան ու արիւնռուշտ ծարաւի անմեղ զոհերի մերկ, անդամահատ դիակները, որոնք անմռունչ, բայց տանջանքից սարսափահար չռած հայեացքները սևեռած դէպի անսահման եթերը բողոքում են տիրող անգթութիւնների դէմ ու արդարութիւն խնդրում:

Բայց ո՞ւր է նա:

Անվերջ տանջանքի, սովի ու թշուառութեան գերեվար ժողովուրդը, յուսահատական ճիգեր է թափում փշրելու իր դէմ լարված դաւերի ցանցերը, դէն ձգելու իրանից այդ եղբայրասպան արիւնոտ ուրուականը, բայց նրա ամեն մի ճիգը զուր է զարկվում, նրա խաղաղասիրական իւրաքանչիւր քայլը, ամեն մի փորձն ու ձգտումը հանդիպում է գաղտնի թէ յայտնի պրովոկացիայի, անհաշտ թշնամութեան, որի ոչ պատճառն է յայտնի, ոչ վերջը, ոչ էլ բուն նպատակը:

Ասում են, որ թուրք գիւղացին կռւել չէ ուզում, հայը՝ նոյնպէս: Բայց ոչ թուրքն է հաւատում հային, ոչ էլ հայը՝ թուրքին. վստահութիւն չը կայ:

Միթէ դրա հետևանքը չէ, որ այսօր երկու դարաւոր հարևան ժողովուրդները սպառազինված դեռ կանգնած են իրար դէմ մահաբեր զէնքով, պատրաստ ամենաչնչին առիթից ջարդ սարքելու, իր երէկվայ «քիրվին» ջնջած յայտարարելու:

Ի՞նչ է պատճառը:

Միթէ խեղճ, իր աշխատանքին նուիրված, թուրք գիւղացին պատճառ ունի ընդհարվելու իր բաղդակից հայ գիւղացու հետ, տրորելու նրա տանը կերած տարիների աղ ու հացը: Չարիքի ծանր օրերում միթէ թուրք աղալարն է նրան օգնութեան ձեռք մեկնել և ոչ հայ գիւղացին, սովի տարիները ում հացով էր նա ապրում, եթէ ոչ նոյն հայի: Շահերի ոչ մի մրցութիւն, տնտեսական ոչ մի ճնշում չէ եղել և չը կայ հայ ու թուրք գիւղացիութեան մէջ: Կան, ընդհակառակը, ընդհանուր տնտեսական շահեր, որոնք թերևս շաղկապէին իրար հետ այդ երկու գիւղացի տարրերը սերտ կերպով, եթէ չը լինէր ներկայ դժբաղդ իրականութիւնը:

Հայ ու թուրք աշխատաւոր մասսան շահագրգռված է խաղաղութեան վերականգնումով: Նա փափագում է նորոգել իր վաղեմի կեանքը, իր տնտեսութիւնը, հանգիստ խղճով ու վաստակով ձեռքով բանել իր մաճը, նուիրվել իր մշակութեան, չը տանջվել արևան ուրուականներից, բայց մութ, գաղանամուտ ուժերը, եսական ու քաղաքական միտումներով, պարբերաբար բաշում կանգնեցնում են նրանց իրար դէմ, ու ժասպառ անում, քամում նրանց կենսական հիւթերը, տրորում, արևան լճի մէջ շահագործում ու ծաղրում նրանց տնտեսութիւնը: Կարելի՞ էր չը զգալ այդ հրէշաւոր հարուածներից ստեղծված տանջանքները:

Մինչդեռ մինչև օրս էլ ապրում ենք միևնոյն սարսափելի պայմաններում, պահ մտած հայրենի փլատակների մէջ: Ո՞վ փորձ արեց վերջ տալ մեր թշուառութիւններին:

Երկու թշնամացած ժողովրդի միջնորդ-հաշտարարը պէտք է լինէր երրորդ անաչառ ու անկեղծ հարևանը:

Բայց նա չը կար. չը տեսանք նրան ասպարեզում իսկական հաշտարարի դերում ու դիմեցինք կառավարութեան: Դա ուղիղ էր թէ իրաւաբանական տեսակէտից և թէ տրամաբանական: Օրէնք ու արդարութիւն պահանջեցինք նրանից, ով օրէնքը, «երկսայրի սուր» դարձնելով, խաղացնում էր իր ձեռքում, իր տրամադրութեան ու քմահաճոյքի համեմատ, իր «իշխանական» շահերի ու քաղաքական պատրանքների թռիչքով, որի ձեռքերը հազարաւոր անմեղների արիւնով էր շաղախված, և որը մեղսակից դարձաւ մեր ներկայ անսահման դժբաղդութեան:

Մեր բոլոր բողոքներին ու պահանջներին պատասխանեցին Չարդերի նոր վարիանտներով, նոր հրամանութիւններով, քամինելի բռնաբարութիւններով։ Աւազակային հօր դաշների պակասը լրացրին «պատուհասող» զօրախմբերը։ Թնդանօթների որոտը խլացրին արդարութեան ձայնը, և խեղճ ու կրակ գիւղացին Թաց աչքած, ձեռքերը ծոցում, Թալանված, անարգված ու լքված փախչում է այսօր կառավարչական պատուհաս-խնամակալութիւնից։

Ըմբռնեց ժողովուրդը ոստիկանական խնամակալութեան կորստաբեր հետևանքները և ընտրեց այլ ճանապարհ իր համար միանգամայն հասկալի ու շիտակ։

Տարի ու կէսվայ փորձերը բաւականին համոզեցուցիչ են, որ ադմինիստրացիան մեզ միայն խոստումներով է օրօրում, բայց անաչառ գործելու ոչ մի ապացոյց չը տուեց։

Նա նպատակ է դրել, արդեօք, վերջ տալ հայ-Թուրքական ընդհարումներին, տոգորված է՞ իսկապէս, անկեղծ այդ բարի ցանկութեամբ։ Տեսնում ենք միայն, որ գեներալներ գեներալների ետևից ուղարկեցին «խաղաղարար» միսսիաներով խաղաղ ու անմեղ ժողովրդի մէջ։ Եւ ամեն մի գեներալի առաջին միսսիան եղաւ ռէվանշի մասին հոգ տանել, Մանջուրիայի դաշտերի մէջ կորցրած զինուորական փառքը մայր երկրում վերականգնել. սկսեցին ամբակոծել գիւղերը, զինաթափ անել խաղաղ ժողովրդին, ներքին Թշնամիներ որոնել, էկզեկուցիաներ նշանակել։ Իսկ չարիքի բուն արմատը՝ ադմինիստրացիան, Չարդերի մեղսակից կառավարչական «գործականները» մնացին իրանց մեղմիաւոր ասպարիզում, յորդաներ կազմակերպելու, ազգաբնակութեան մի մասը միւսի դէմ զինելու և նոր պրօվակացիաներ պատրաստելու համար։

Եւ քանի որ մի որևէ պրիստաւի, ստրաժնիկի կամ գորոդովոյի զեկուցումը աւելի գերակշռող նշանակութիւն կունենայ քան մի ամբողջ հասարակութեան ձայնը, քանի պաշտօնեաների ապօրինութիւնները կը մնան անպատիժ ու կը վարագուրվեն, խաղաղութիւնը չէ կարող վերականգնվել։

Հայ ժողովրդի բողոքը՝ կատարվող ապօրինութիւնների ու գազանութիւնների դէմ երկինք անգամ հասաւ, բայց ապարանքի խեղդող մթնոլորտում նրանք հալվեցին ու չքացան։ Շուշու գաւառում Վէվերնի գործած սխրագործութիւնները քննութեան ենթարկվեցին և՝ չը նայելով մամուլի բաժին դարձնելու խոստումին, մինչև այժմ էլ գաղտնիք է մնում հասարակութեան համար։ Իսկ տխրահռչակ հերոսը ձգնում է հասարակական կարծիքի առաջ մաքրել իրան այդ կեղտերից և գնա ուրիշին մեղադրել։ Բայց մի՞թէ Վէվերնը ինքը պէտք է արդարացնի իրան, այլ ոչ այնտեղ ուղարկված քննիչ մասնաժողովը։

Այդ բոլորից յետոյ բողոքող ժողովրդի դէմ ուղարկվում է դարձեալ անպատժ ու տնարատ Վէվերնը, նորից և ամբակոծելու։ Ինչ է նրանց մեղքը. այն որ դրանք ինքնապաշտպանութեան միջոցներ են ձեռք առնում, պատժում են աւազակների անսանձ ու չարագործութեամբ պարապվող սրիկաներին, Թէ երկու ոչխար են գողացել ու մի հորթ, Թալանել են մի Թուրքի և սխալմամբ կաշկանդեցին, Թուրք աւազակների տեղ դնելով, հետոյ գնդակահարել։ Արդարև դրանք էլ յանցանքներ են և հարկաւոր է պատժել։

Բայց ո՞րտեղ են այդ Թնդանօթները երբ ամեն օր հայերի նախիր են քշում, նախրապան երեխաներին մորթում, հանդում աշխատողներին գնդակահարում։ Ի՞նչու չեն ուղարկում նրանք Աղդամի աւազակների դէմ, որոնք ոստիկանական պաշտօնազգեստներով զրօսնում են Գանձակի գաւառներում, Թալանում են արքունական խճուղու վրա հանրակառքերը՝ կոտորում խաղաղ ճանապարհորդներին, Խոզնավարի շրջակայ բարձր գիրքերում ամրացած զինված Թուրք խուժանի վրա որոնք սպանեցին պետական պաշտօնեային, ստրաժնիկներին և սպառնում են գիւղը մրտնելու սպանդանոց դարձնել։ Մեղաւոր հայերն են միայն... այն էլ հայ գիւղացիները... Այդ պատճառով էլ Թնդանօթը նրան դէմ են ուղարկում, տուգանքները նրանց վրա նշանակում։

Այսպէս է իրողութիւնը։

Գաւառական ադմինիստրացիայի գործած անարդարութիւններին մինչև այժմ էլ վերջ չը կայ։ Անպատժ ու արդարասէր վարմունք շատ քիչ է նկատվում։ Խտրութիւնը ամեն տեղ էլ իշխում է, անարեկումը միշտ էլ հայի դէմ է ուղղված։

Կառավարութիւնը անզօր է, արդեօք, հային պաշտպանելու, Թէ չէ ցանկանում—մեզ համար այդ միևնոյն է, ինքնապաշտպանութեան կարիքն ու պահանջը մեծ է մեզանում։ Արդարադատութիւն ու պաշտպանութիւն ենք սպասում, մինչև այժմ էլ նա չը կայ, մեր փչացած խաղաղութիւնը չը վերականգնվեց, մեր տանջանքներին վերջ չը կայ։ Ադմինիստրացիայի վրա յոյս դնելը ապարդիւն է։ Ժողովուրդը ինքը պէտք է իր ձեռքը առնէ խաղաղութեան գործը։ Մինչև այժմ եղած խաղաղարար մասնաժողովները եղել են լոկ խորհրդակցական, բայց նրանք պէտք է ստանան գործնական իրաւունքներ. գաւառական ադմինիստրացիան պէտք է ղեկավարվէ նրանց ցուցմունքներով, այն ժամանակ միայն բաւարար արդիւնք կը տան այդ մասնաժողովները։

Միւս կողմից, մինչև որ ադմինիստրացիան չը Թողնէ իր քաղաքական միակողմանի գործունէութիւնը, գորոդովոյից սկսած մինչև բարձր պաշտօնեան չը դադարեն հովանաւորել ազգայնականութեան վնասակար տարրերին Թուրք մասսային գործիք դարձնել հայերի դէմ, անխնայ յանցաւոր չարդարարներն ու մարզպետները արժանաւոր պատիժ չը կրեն, արդարադատութիւնը ցոյց չը տայ իր ոյժն ու անաչառութիւնը, արիւնոտ կօշմարը վերացնելու ոչ մի յոյս չը կայ։

Անթիւ փաստերը վկայում են, որ տեղական ադմինիստրացիան իր կոչմանը չէ ծառայում. Փրէյլիս, Երմոլայեվ, Վէվերն Շուշու գաւառում, Ալիևը Գետաբէկում, Աւալիշվիլին՝ Գանձակում, Օրլով՝ Ղազախում, Մահմէդ-բէգ և Շամշադինովները Սուրմալում ահա մի շարք հերոսներ, որոնք անմիջապէս կապված են հայկական արիւնոտ ներկայի հետ։ Ե՞րբ, վերջապէս, այդ մարզպետները պէտք է Թօթափվեն ռուսաց ադմինիստրացիայի անփառունակ Թագի վրայից, ու ազատեն խեղճ ժողովրդին ներկայ Թշուառութիւններից, ու ծագող պրօվօկացիաներից, որին սահման ու վերջ չը կայ։

Դանիէլեանց

## ՄՈՌԱՑՎԱԾ ԱՆԿԻՒՆՆԵՐ

### IV

Պատկերը աւելի տխուր է դառնում, երբ վերցնում ենք հայ ազգաբնակութեան վերաբերեալ վիճակագրութիւնը առանձին Դարաչիչակի շրջանում։ Դիմենք այդ վիճակագրութեան։

Նախորդ յօդուածում առաջ բերած 47 գիւղերը բաժանելով ըստ ազգութեան իրանց հողաբաժիններով՝ ստանում ենք հետևեալ պատկերը։ Զուտ հայաբնակ գիւղերի Թիւն է 23, որոնք միասին ունեն 4,011 տուն բնակիչ, 45,910 դեսեատին հող, որից 20,886 դես. վարելահող, 2,925 դես. խոտահարք և 22,099 դեսեատին արօտատեղի։ Զուտ Թուրքաբնակ գիւղերի Թիւն է 18, որոնք միասին ունեն 761 տուն բնակիչ, 14,260 դեսեատին հող, որից 5,664 դես. վարելահող, 6,075 դես. խոտահարք և 7,521 դես. արօտատեղի։ Մնացեալ 6 գիւղերը մօլօկանաբնակ են, որոնք միասին ունեն 453 տուն բնակիչ, 9,009 դեսեատին հող, որից 2,834 դես. վարելահող, 779 դես. խոտահարք և 5,396 դես. արօտատեղի։ Հողերը վերածելով ծխաբաժինների ըստ ազգութեան ստանում ենք իւրաքանչիւր հայ ընտանիքի 11½ դես., որից 5¼ դես. վարելահող, ¾ դես. խոտահարք, իսկ 5½-ը արօտատեղի. իւրաքանչիւր Թուրք ընտանիքի 18¾ դես., որից 7½ դես. վարելահող, 1½ դես. խոտահարք, իսկ 9¾-ը արօտատեղի. իւրաքանչիւր մօլօկան ընտանիքի 20 դես., որից 6¼ դես. վարելահող, 1¾ դես. խոտահարք, իսկ 12 դես. արօտատեղի։ Ինչպէս տեսնում էք ամենից մեծ հողաբաժիններով օգտվում են մօլօկանները, այնուհետև Թուրքերը, իսկ ամենափոքր հողաբաժիններով հայերը. համեմատաբար պերճախօս Թուեր. ուր 20 դես., ուր 18¾-ը և ուր 11½-ը։ Հայ ընտանիքը օգտվում է կէսով այն տարածութեան, ինչ տարածութիւնով օգտվում է մօլօկան ընտանիքը և երկու երրորդով այն տարածութեան, ինչ տարածութիւնով որ օգտվում է Թուրք ընտանիքը։

Թերևս ենթադրվի, որ հայ ազգաբնակութեան պատկանող հողերը, որակով և արտադրութեամբ աւելի բարձր տեսակի են քան մօլօկանների և Թուրքերի պատկան հողերը, այդ նոյնպէս ճիշտ չէ։ Ահա կը բերենք դարձեալ վիճակագրական Թուեր։

47 գիւղերի հողերից ստացվող զուտ արդիւնքը, համաձայն հարկային տեսուչների տուած տեղեկութեան, որոնց հաշւով տեղի են ունենում հարկերի բաժանումը, հասնում է 263,611 րուբլու։ Ինչպէս նախորդ յօդուածում տեսանք, այդ 47 գիւղերում ապրում են 5,225 տուն բնակիչներ։ Հողային արդիւնքը—273,611 րուբլին—բաժանելով 5,225 ծխի վրա, ստանում ենք իւրաքանչիւր ծխին զուտ արդիւնք, ի հարկէ միջին Թւով, 50 ր. 45 կ.։ Հողային արդիւնքի այդ ընդհանուր գումարը բաժանելով ըստ ազգութեան, գալիս է 23 հայաբնակ գիւղերին, ուր ապրում են 4011 ծուխ, 187,902 րուբլի։ 18 Թուրքաբնակ գիւղերին, ուր ապրում են 761 ծուխ, 39,081 րուբլի, իսկ 6 մօլօկանաբնակ գիւղերին, ուր ապրում են 453 ծուխ, 36,628 րուբլի։ Հողային արդիւնքի այդ առանձին գումարները բաժանելով ծխերի Թուի վրա ըստ ազգութեան, ստանում ենք իւրաքանչիւր ծուխ մօլօկանին 80 ր. 85 կ., իւրաքանչիւր ծուխ Թուրքին 51 ր. 35 կ., իսկ իւրաքանչիւր ծուխ հային ընդամենը 46 ր. 84 կ.։ Համեմատութիւնը ակներև է։

Թէ ինչպէս է առաջ եկել հողաբաժինների այսպիսի անհաւասար բաժանումը, այդ ունի մի շարք բարդ պատճառներ, որոնք կապված են մի կողմից՝ տիրող կարգերի և օրէնքների Թերութիւնների հետ սեփականութեան և որոշ տարիների ընթացքում տիրապետութեան հասկացողութեան սկզբունքի տեսակէտից և միւս կողմից վարչական աննորմալ կարգերի հետ, ուր անհատները խնդիրներին վերաբերվել են անձնական տեսակէտներով, ուր բացակայել է անաչառութիւնը և ուր տեղի են ունեցել խտրութիւններ, որոշ ազգութիւնների պատկանող անհատների մէջ։ Այսպէս մօլօկանները գտել են հովանաւորութիւն վարչական մարմինների կողմից, այդ աւելի նկատելի է եղել վերջին տարիներում, երբ կովկասեան ադմինիստրացիան տեղական ժողովուրդներին, մանաւանդ հայերին, սկսեց հալածել ամենաանմարդի և վանդալներին յատուկ միջոցներով։ Մօլօկանները հէնց սկզբից գտել են կառավարութեան պաշտպանութիւնը և զօրեղ պաշտպանութիւն ի վնաս տեղական ժողովրդների։

Հողերի անհաւասար բաժանման մի աւելի բնորոշ օրինակ մենք գիտենք Նախիջևանի գաւառում։ Այդ գաւառի երկրորդ մասում ընկած է Կարմալինօվկա (Բիչենակ) մօլօկանի գիւղը, որը ունի ընդամենը 28 ծուխ, իսկ հող 1770 դես., իւրաքանչիւր ծխին 63 դես. մինչդեռ այդ գիւղից ոչ հեռու ընկած Գեօմաշ հայ գիւղը իր 116 ծխով ունի 1,884 դես. հող, իսկ Գժաձոր հայ գիւղը իր 94 ծխով ընդամենը 1,170 դես. հող. իւրաքանչիւր ծխին առաջին գիւղում 16 դես., իսկ երկրորդում միմիայն 12½ դես.։ Եւ այս հանգամանքը է պատճառ, որ գեօմուրցի և գժաձորցի հայերը վերցնում են Կարմալինօվկայի մօլօկաններից անհագին քանակութեամբ հողեր մշակելու համար, վճարելով բաւականաչափ մեծ վարձագին։

Բացարձակ հովանաւորութիւն նկատելի է դէպի մօլօկանները նաև ադմինիստրացիական բաժանման տեսակէտից։ Դարաչիչակի շրջանում մեր յիշած 6 մօլօկան գիւղերը կազմում են երկու գիւղական հասարակութիւններ իրանց տանուտէրներով. նրանց չեն խառնում տեղացիներին։ Նախիջևանի գաւառի մեր յիշած Կարմալինօվկա գիւղն էլ իր 28 ծխով կազմում է մի գիւղական հասարակութիւն, մինչդեռ նոյն Կարմալինօվկայի շրջանում Ղարաբաղլար գիւղական հասարակութիւնը, բաղկացած լինելով 28—այն է, 21 Թուրք և 7 հայ գիւղերից, ուր հայ ժողովուրդը փոքրամասնութիւն կազմելով ենթարկվում էր ճնշումների, մանաւանդ վերջին հայ-Թուրքական ընդհարումների ժամանակ, քանիցս հայ 7 գիւղերի դիմումը առանձին գիւղական հասարակութիւն կազմելու նկատմամբ բաւարարութիւն չէր գտնում։

Ահա խտրութիւնների և միակողմանի հովանաւորութիւնների ու հալածանքների այս գարշելի քաղաքականութիւնը ստեղծել է մեր երկրի մէջ, կապիտալի յեղաշրջող ազդեցութիւնից էլ դուրս, բնութեան բարիքների անհաւասար բաշխումը, տնտեսական դրութիւնների մի սոսկալի անհաւասարակշռութիւն և վերջապէս ցեղային մի անտագօնիզմ—պայմաններ, որոնց մէջ տառապում է մեր երկրի Թշուառ ժողովուրդը։

Մենք մի փոքր մեր բուն հարցից շեղվեցինք, ի նկատի ունենալով խնդրի կարևորութիւնը մեր ընտրած նիւթի տեսակէտից։

Տիրող կարգերի, օրէնքների և վարչական մարմինների միակողմանի ու աչառու վերաբերմունքի շնորհիւ սակաւահող Դարաչիչակի շրջանում ստեղծվելով հողերի բաշխման մի անարդար և անհաւասար դրութիւն ըստ ազգութիւնների, նոյն անհաւասար արտացոլումն տեղ է գտել նաև առանձին ժողովրդների ներքին կեանքի—այն է նոյն ժողովրդի գիւղերի, հասարակութիւնների և ծխերի մէջ հողերի բաշխման տեսակէտից։ Ուժեղ գիւղը մեծ հողաբաժին է ձեռք բերել քան կը հասնէր նրան, ուժեղ ծուխը աւելի արդիւնաւէտ հողեր է սեփականել, և այսպիսով ստեղծվել է զրկանքների մի շղթայ, որը գնալով և խառնվելով ծանրացել է միմիայն և միմիայն ճնշված, իրաւազուրկ մասսայի վրա։

Այս հարցին կը դառնանք միւս անգամ։

Օնիկ

## ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ՄԱԴՐԱՍԱՅԻՑ մեզ գրում են. Յունիսի 25-ին տեղիս ուսումնարանի դահլիճում Թատրոնասէրները ներկայացրին Արէլեանի «Մարող ճրագները» և Փանոսեանի 200000-ը։ Աջող էր պիէսի ընտրութիւնը. աջող էր և դերակատարների բարեխիղճ խաղը։ Մի գեղեցիկ զուգադիպութիւն, պիէսի մէջի հօր, մօր և աղջկայ դերերը կատարում էին ուսումնարանի աւագ ուսուցչի պ. Քօսեանի ընտանիքի երեք համապատասխան անդամները՝—Քօսեանցը (հայրը), կինը՝ (վարժուհին) և աղջիկը։ Դահլիճը լիքն էր հանդիսականներով, որոնց մեծամասնութիւնը կանայք էին։ Ներկայացման վերջում վարժուհի տ. Քօսեանցի նախաձեռնութեամբ տեղի ունեցան մի քանի երգախառն պարեր։ Թէ ներկայացումը և Թէ պարերն այնքան դուր եկան հասարակութեան, որ երկար չէր կամենում հեռանալ դահլիճից։ Մանաւանդ օր. Քօսեանցը (Մարթայի դերում) իր խաղով ուշք գրաւեց մի երկու տեղում նա լացացրեց հասարակութեան։ Ներկայացման աջողութեան նպաստեցին օր. Սաթենիկ Աղայեանցը և եղբ. Տէր-Սահակեանցները։ Զուտ արդիւնքը՝ մօտ 60 րուբլի. յատկացվելու է կանանց «Անահիտ» խմբի ձեռագործի վերաբերեալ գործիքները ձեռք բերելու։

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են.—Յունիսի 20-ին, տեղիս օրիորդաց դպրոցի դահլիճում, երկու ուսանողների օգտին ներկայացվեց Մօլիէրի «Բռնի ամուսնութիւն» վօդևիլը։ Պիէսը անցաւ բաւականին աջող։ Իր խաղով աչքի էր ընկնում Զգանարէլի դերի մէջ պ. Գ. Աւագեանը։

Վօդևիլից յետոյ եղաւ երաժշտական բաժին։ Ժողովրդին մեծ բաւականութիւն պատճառեցին իրանց երգերով, օր. Մ. Սօլօվեան, պ. պ. Կարապետեան և Ն. Մէզնիկեանը երգը։ Լաւ էր նաև օր. Մ. Պօպօվեան իր արտասանած ոտանաւորով և պ. Բայեանցը, որ նուագեց վիօլօնչէլի վրա։

Արդիւնքը բաւական աջող էր։ Ժողովուրդը գոհ մնաց երեկոյթից, ցրվելով տուն առաւօտեան 5 ժամին։

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալէքսանդրապօլ, յունիսի 10-ին

Խնդրեմ, եթէ հնարաւոր է, «Մշակ»-ի մօտակայ №-րից մէկում տպագրել հետևեալ երկտողը։—

Ես ունեմ պատրաստ տպագրութեան համար մեր եկեղեցական կանոնների մի կանոնախումբ՝ մօտ 30 ձեռագրների համեմատութեամբ։ Այդ աշխատութեանս կցել եմ նաև մի ուսումնասիրութիւն—առաջաբան։ Երկուսը միասին կը լինեն մօտ 60 մեծադիր երես՝ տպվելուց յետոյ։ Նոյնանման աշխատութիւններս մէջ դա երրորդն է, երկուսն արդէն հրատարակել եմ։ Այդ աշխատութեանս տպագրութեան կարժենար մօտ 50 րուբլի ծախք, որ ինձ համար խիստ ծանր է։ Եթէ որ և է ուսումնասէր անձն յանձն առնի տպագրութեան ծախքը, ես տպագրվելուց յետոյ ամբողջ հրատարակութիւնը համաձայն եմ Թողնել հրատարակչի տրամադրութեան տակ, նուիրելու որ և է հիմնարկութեան կամ բարեգործական նպատակի։ Ինձ Թւում է Թէ, հայրենի եկեղեցու իրաւունքի ուսումնասիրութեան կարևոր այդպիսի գործի 40—50 րուբլի զոհող մարդիկ կը գտնվեն։

Այդ մասին խնդրեմ գրել ինձ Ալէքսանդրապօլ։

Արսէն վարդապետ

---

Իգդիր, յունիսի 25-ին

Եթէ մարդիկ տարի և կէս կոտորում են միմեանց առանց կանգ առնելու, դրա պատճառը այն է, որ Թէ ազդանշանի սկզբում և յետոյ, մենք չը տեսանք մի յանցաւոր մեղադրեալի նստարանի վրա։ Բոլորը արձակվում էին քննիչներից, որովհետև մեղադրութեան յայտնի ապացոյցներ երևան չէին հանվում։ Խաղաղ էր Սուրմալուն, մարդակերութեան ախտից ազատ, որ մեծ ցաւ էր պատճառում չար ոգիներին. և մեծ ջանք գործադրելով մանկակի երևոյթներ առաջացրին, որի ֆինալը եղաւ ամբոխային յարձակում։ Գլխացաւանք էր հարկաւոր, մանկակի դէպքերը քննելու, լուսաբանելու, և յանցաւորներին երևան հանելու համար, որին մենք էլ ներողամիտ լինենք։ Այստեղ մրցութիւն չը կայ, որ մարդիկ եռանդ արտայայտեն։ Գրվեցին արձանագրութիւններ, կատարվեց ձեռնարկութիւն և ամեն բան կատարեալ է. մնում է գործը պահեստ յանձնել, որ, ի հարկէ, երբեք արդիւնք չի լինիլ ամսիս քառասնին ոճիրը լրվելն համար։ Սակայն պատահում է և այլ կերպ. ինչպէս, օրինակ, Ալիղամարլու հայ գիւղի վրա յարձակվող Նաջի գիւղի Թիւրքերից և քրդերից զինուորները կալանաւորեցին 14 մարդ՝ օրդուի ղեկավար՝ Բեարում Շամշադինովի հետ։ Այստեղ արդէն փաստերի բացակայութիւն լինել չէր կարող, փնտռելն էլ աւելորդ է. բայց և այնպէս անմեղ աղաւնեակի պէս, արձակվեցին բոլոր կալանաւորները երևի մի նոր աւելի չար ծրագիր իրագործելու համար։

Այդպէս ներողամիտ կարող են վարվել այն ռուս պաշտօնեաները, որոնք ընդունակութիւն չունեն հայի, Թուրքի, քրդի աշխարհայեցողութիւնը ըմբռնելու. բայց ի՞նչ բացատրութիւն կարող են տալ Սուրմալուի խաղաղարար յանձնաժողովի տեղացի անդամները իրանց ներողամիտ վարւողութեան համար, որով ըստ էութեան նպաստել են միայն չար գործութեան քօղարկվելուն։

Միթէ խաղաղարար յանձնաժողովի դերը կայանում է միայն նրանում, որ խնդրեն յանցաւորներին՝ դադարել չարագործութիւն անելուց, ինչպէս խնդրում են երեխաներին չարութիւն չանել. այդ աւելի քան անմտութիւն է խաղաղութեան գործին խանգարող պայման։

Խաղաղութիւնը վերականգնելու համար անհրաժեշտ է չարագործութեան արմատը քննել, պատճառը պարզաբանել և յանցաւորներին ամենախիստ պատժի ենթարկել։

Ես չեմ խօսի խաղաղարար մասնաժողովի Թուրք անդամների մասին, որովհետև դրա համար պարտաւոր է մտածել Թուրք ժողովուրդը, եթէ միայն նա ջերմ փափագում է անդորրութեան. սակայն անհրաժեշտ է իմանալ Թէ ի՞նչ են մտածում հայ անդամները, իմ յարգելի ընկերներս, իրանց ստանձնած պարտականութեան մասին։

Սուլթանաբադցի և արհաջեցի Թուրքերը հետամուտ լինելով հայ քաղհանաւորներին, կողոպտում են։

Պրիստաւը տեղեկանալով այդ մասին՝ հետապնդում է և անմիջապէս կալանաւորում կողոպտողներին, որոնց յանցաւորութիւնը ապացուցանում են Թուրք վկաները և կողոպտվող կինը։ Հարցը պարզ է. այսպիսի րօպէում ամենաթեթև յանցանքն իսկ պէտք է խիստ պատժի ենթարկել, որ հասկանան Թէ օրէնք ու արդարութիւն կայ աշխարհում։ Բայց իմ յարգելի ընկերներից երկուսը առանց խորհուրդ կազմելու իրաւունք են համարում միջամտել գործին յօգուտ աւազակների։ Մարտիրոս Կանայեանը խնդրում է ազատել սուլթանաբադցի, իսկ Յակովբ Հայրապետեանը խնդրում է ազատել արհաջեցի Թուրք աւազակներին։ Չը գիտեմ յօգուտ հասարակական շահերի Թէ անձնական։ Կան և ուրիշ օրինակներ...

Բայց ինչ են մտածում իրանք սուրմալուեցի ընտրութիւնները կատարելիս։ Աչքակապի անուն չը կրելու համար ես սրանով առաջարկում եմ սուրմալուեցիներին հրաժարականս խաղաղարար մասնաժողովի անդամութիւնից։

Յ. Խօջաէյնաթեան

---

Թիֆլիս, 30 յունիսի

Ես ստիպված եմ բողոքել Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութեան այժմեան վարչութեան մի տգեղ սովորութեան դէմ։ Այդ վարչութիւնը իր անգործունէութիւնը մի կերպ քօղարկելու համար, հետևեալ հեշտ միջոց է մտածել. ամեն անգամ, որ մի տառապեալ, չքաւոր, դիմում է նրա օգնութեան, նա առանց այլևայլութեան պատասխանում է. «մենք փող չունենք, բայց ահա ցոյց տանք քեզ որտեղ կարելի է ստանալ. գնա առաջնորդարան կամ «Մշակի» խմբագրութիւնը, նրանք փող կը տան քեզ. նրանց մասնաժողովը շատ փող ունի և կոչվում է Նպաստամատոյց»։ Ահա այն խօսքերը, որ անխտրաբար կերպով կրկնում են բոլոր խնդրատուները, երբ Բարեգործական Ընկերութիւնից մերժվելով, դիմում են ինձ, իբրև Նպաստամատոյց յանձնաժողովի անդամ—քարտուղարին կամ պ. Մելիք Ազարեանին իբրև անդամ—գանձապահին և կամ առաջնորդին, իբրև նախագահի։

Եւ երբ մենք յայտնում ենք, Թէ Նպաստամատոյց յանձնաժողովը հաստատված է միայն հայ-Թուրքական ընդհարումներից վնասված հայերին օգնելու և իրաւունք չունի ուրիշ տեսակի տառապեալներին օգնելու և դրանց օգնելու պարտաւորութիւնը պատկանում է Բարեգործական Ընկերութեան, դիմողները մեզ պատասխանում են զայրացած. «հապա ինչու մեզ այնտեղ ասացին, որ դուք պէտք է օգնէք և ուղարկեցին այստեղ»։

Բարեգ. ընկ. վարչութեան շատ լաւ յայտնի է. որ Նպաստամատոյց յանձնաժողովը ամենևին իրաւունք չունի օգնել սովորական տառապեալներին, բայց նա փոխանակ ինքն օգնելու դրանց կամ գոնէ հասկացնելու որ անկարող է օգնել, իր օձիքը Թափելու և հեշտ պրծնելու ու «մի բան էլ արած լինելու համար» աւելի լաւ է համարում մոլորեցնել խնդրատուներին և ուղարկել իմ գլխին և խեղճերը զուր տեղ դիմում են և ձեռնունայն վերադառնում։

Հ. Առաքելեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունիսի լոյս 30-ի գիշերը Թիֆլիսում սաստիկ յորդ անձրև տեղաց։ Մի քանի տեղ ներքնայարկերը լցվել են ջրով. տեղ-տեղ անհրի տանիքներ և պատեր են փլվել։

Ժողովրդական ազատութեան կուսակց. Թիֆլիսի անդամները որոշել են Թիֆլիսի այգիներից մէկը յատկացնել իբրև ակումբ այդ կուսակցութեան անդամների համար, որոնք պէտք է ժողովվեն շաբաթական 1 անգամ։ Հաւանական է, որ Արտիստական ընկերութիւնը տայ իր այգին։

Մեզ հաղորդում են, որ վաճառականների համքարը դիմել է խնդիրքով Վեհափառ Կաթողիկոսին, որ Թոյլ տրվի այրի քահանաներին կրկին ամուսնանալու։

Երէկ, յունիսի 30-ի առաւօտեան ժամի 9½-ին, Փոխարքայի պալատի առաջից, հանդիսաւոր նուագածութեամբ, անցաւ Ելիսաւետպոլեան գունդը դէպի իր ժամանակաւոր զօրանոցները՝ Սեմինարիայի բնակարանը, որտեղից էլ ուղևորվեց դէպի Կարս և Սարիղամիշ, ուր պէտք է մնայ ամառս։

Ինչպէս հաղորդել էինք «Մշակի» նախանցեալ համարում, յունիսի 28-ին Գրիբոյեդովի փողոցում կալանաւորվել էին գիւղացիներ Հէրակլի Չարկվիանին և Գրիգոր Մամացեվը։ Կոմենդանտի վարչութիւնից կէս գիշերին նրանց տանում են բերդը մի օֆիցերի և չորս զինուորների ուղեկցութեամբ։ Մետեխի բերդի մօտերը լսվում են հրացանի գնդակի 6 ձայներ և երկու կալանաւորներն էլ ընկնում են սպանված։ Զինուորները դէպքը բացատրում են նրանով, որ կալանաւորները իբրև Թէ ուզում էին փախչել։

Մեզ հաղորդում են, որ Ղարաբաղի Թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը գանգատվել էր Տ. Նազարեանից, որ վերջինս նրան մի շարք մեղադրանքներով վատաբանել էր։ Թիֆ. Նահ. դատարանը, ինչպէս պահանջում է օրէնքը, այդ գործն ուղարկել էր քննիչին երկու կողմին կանչելու և հաշտեցնելու։ Աշոտ եպիսկոպոսը, ոչ առաջին անգամ և ոչ երկրորդ անգամ, չէր ներկայացել քննիչին։ Տ. Նազարեան հաշտվելու համաձայնութիւն չէ ցոյց տուել քննիչին։ Իսկ վերջինս մեղադրողի երկրորդ անգամ չը գալով գործը դատարեցրել է։

Մեզ հաղորդում են, որ «Ազգագրական Հանդէսի» խմբագիր պ. Երուանդ Լալայեանին յաջողվել է Կովկասի Հայոց Ազգագրական նորակազմ ընկերութեան ճիւղեր բաց անել Կարս և Ալէքսանդրապօլ քաղաքներում, ինչպէս որ տրամադրում է այդ միևնոյն ընկերութեան կանոնադրութիւնը։ Ցանկալի էր, որ ընկերութեան այդ ճիւղերը կարողանային իրանց պահպանութեան տակ առնել իրանց շրջանների հնութիւնները։

Հինգշաբթի լոյս ուրբաթի գիշերը, ժամի 2½-ին, քաղաքումս տեղի ունեցաւ մի սարսափելի ոճրագործութիւն։ Անյայտ աւազակներ մտան Բեթղեհէմի Թաղում Գրիգոր Վարդանեանցի բնակարանը, կողոպտելու նպատակով։ Բայց հանդիպելով դիմադրութեան, ոճրագործները տեղն ու տեղը սպանեցին Ալէքսանդր Վարդանեանցին, Գրիգորի եղբօրը, և մահացու կերպով վիրաւորեցին Գրիգորին։ Թէ ինչ տարան՝ յայտնի չէ։ Միայն Գրիգորը իր ստացած վէրքերից վախճանվեց երէկ Միքայէլեան հիւանդանոցում, ուր փոխադրվել էր։

Թիֆլիսի շրջակայ ամառանոցները, համեմատած անցեալ տարիներին, դատարկ են։ Բորժոմի ամառանոցների մեծ մասը մնացել է չը վարձված։ Ինչպէս մեզ հաղորդում են, այս տարի Ղարաքիլիսայում անհագին քանակութեամբ ընտանիքներ են գնացել Բագուից, Թիֆլիսից և այլ տեղերից, այնպէս որ, շատերը, տեղ չը լինելու պատճառով ստիպված են գնալ Դիլիժան։

Ամսիս 29-ին լոյս 30-ի գիշերը քաղաքիս Ալէքսանդրովսկայա փողոցում գտնվող № 41 տան մէջ բնակվող Թիֆլիսի ռէալական դպրոցի մի ուսուցչի բնակարանն են մտնում մի քանի չարագործներ և կողոպտում մի քանի արժէքաւոր իրեր։ Չարագործները մտնում են փողոցի կողմից բացված պատուհանով և այդտեղով էլ դուրս գալով՝ գողացած իրերի հետ միասին անյայտանում։

Յունիսի 29-ին, ցերեկվայ ժամի 4-ին, Սունժէնեան գնդի կօզակ Մաքսիմ Կուզմինը, որ պահապան էր նշանակված Թիֆլիսի կայարանապետի մօտ, մտնելով Աֆանասիէվի փողոցի վրա գտնվող Միկաձէի գինետունը, ենթարկվեց յարձակման մի անյայտ անձի կողմից։ Վերջինս վիրաւորեց Կուզմինին գլխից ու խլեց նրա մօտ եղած հրացանը։ Վիրաւորը ուղարկված է երկաթուղու հիւանդանոցը, իսկ կալանաւորված Միկաձէն՝ կոմենդանտի վարչութիւնը։ Կուզմինին վիրաւորող յանցաւորը, խլած հրացանով միասին, անյայտացաւ։

Յունիսի 23-ին Բագուի կենտրոնական բանտի վերակացուները գործադուլ արեցին, երեք վերակացուների պաշտօնից արձակվելու պատճառով, և երեկոյեան չը գնացին հերթապահութեան։ Նրանց փոխարէն ուղարկվեցին 24 գորոդովոյներ ու մի քանի կօզակներ, որոնք փոխարինեցին գործադուլ անողներին։ Գործադուլ անողները նախատեսնելով իրանց պաշտօնազրկութիւնը վերադարձան ու սկսեցին իրանց պաշտօնավարութիւնը։

Ռօստով Դօնի վրայից հաղորդում են «Р. Сл.»-ին. Վլադիկավկազի երկաթուղու վարչութիւնը կարգադրել է հսկողութիւն ունենալ ինգուշ-ճանապարհորդների և նրանց ծանրոցների վրա։

Յունիսի 25-ին Գրօզնայում միտինգ հաւաքված բանւորների ու կօզակների մէջև ընդհարում է տեղի ունեցել։ Լուրերին նայելով երկու կողմից էլ վնասվածներ կան։

Յունիսի 25-ին Վլադիկավկազում ինգուշների և կօզակների ներկայացուցիչները գեներալ-նահանգապետ Կոլիւբակինի նախագահութեամբ հաշտութիւն են կայացրել ինգուշների ու կօզակների մէջ։ Տեղի են ունեցել հանդիսաւոր ճառախօսութիւններն ու համբոյրները հաշտութեան համար։ Աջողութիւն ենք մաղթում։

Մեզ հաղորդում են, որ Պետական 1906 Թւի ելմտացուցակը կրճատված է 3409600 րուբլով, այն պայմանով միայն, որպէս զի այդ փողերով պահվի ոստիկանական նոր կազմ։

«Իսկական ռուս մարդիկ» գործում են եռանդով։ Յունիսի 25-ին Պետերբուրգում սև հարիւրեակայինների միութիւնը երկրորդ անգամ է ժողով նշանակել, որի նպատակն է—լուսաբանել հրէական և ինտելլիգենցիայի ջարդեր կազմակերպելու ծրագրի էական կէտերը։ Քաղաքը նրանք բաժանել են մի քանի մասերի և իւրաքանչիւր մասը ունի իր «տասնապետը» և «հարիւրապետը»։

«XX Вѣк.»

«Русск. Сл.» լրագրի մէջ տպագրված է իր պարիզեան Թղթակցից ստացած հեռագիրը յունիսի 20-ից. «Այսօր առաւօտեան ռուսական գործերի հետ անմիջական կապ ունեցող բանկերից մէկի դիրեկտորը մի կարևոր հեռագիր է ստացել։ Հեռագրում արժանահաւատ աղբիւրներից հաղորդվում է, որ այս շաբաթ Պետերհօֆում վերջնականապէս վճռվելու է մինիստրական հարցը։ Երկիւղ կայ, որ Գորեմիկինի կաբինետը հրաժարական չը տայ, իր տեղը գեներալ Տրեպովի, Իգնատիէվի և Դուրնովոյի դիկտատուրային զիջանելու համար, եթէ միայն «կադետների» կուսակցութիւնը չափաւորութեան լուրջ և հաստատուն երաշխաւորութիւն չի տայ Դումայից կաբինետ կազմելիս։ Պետերհօֆի խորհրդականները գիտութեամբ խորհուրդ տուեցին պահանջել «կադետներից» այնպիսի երաշխաւորութիւններ, որոնց նրանք տալ չեն կարող, որովհետև իրանց դէմ կը գրգռեն Դումայի ձախակողմեաններին։ Նրանք ուզում են դրանով հնարաւորութիւն ստանալ ասելու Եւրոպային. «Մենք հարկադրված էինք փրկութիւն որոնել դիկտատուրայի մէջ, որովհետև «կադետները» չը համաձայնվեցին իրանց վրա վերցնել իշխանութեան պատասխանատուութիւնը»։

Ներքին գործերի մինիստրութիւնը, «Обрывъ»-ի ասելով, գաղտնի հրահանգներ է պատրաստում գեներալ-նահանգապետների, քաղաքապետների և ոստիկանապետների անունով, որով առաջարկվում է կայսրութեան մէջ Թոյլ չը տալ ժողովներ կազմելու սօցիալ-յեղափոխականներին և սօցիալ-ռամկավարներին։

«Нов. Вр.» լրագիրը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրը հրահանգներ է ուղարկել գեներալ-նահանգապետներին և նահանգապետներին, քաղաքապետներին և ոստիկանապետներին, որով առաջարկում է Թոյլ չը տալ միտինգներ ու ժողովներ գումարել ճեմելիքներում և հասարակական զբօսավայրերում։ Միևնոյն ժամանակ խիստ կերպով հրամայված է Թոյլ չը տալ յեղափոխական երգեր երգել կամ երաժշտութեամբ նուագել։

Պետական Դումայի օթեակներում «С.-Петерб. Газета» լրագրի ասելով, յունիսի 23-ին եղել է կօզակների մի ստանիցայից եկած սուրհանդակ, 45 տարեկան։ Նա յայտնել է, որ կօզակները վրդովված են պատգամաւոր Վասիլիէվի Դումայում արտասանած ճառերից, որով պաշտպանում էին կօզակների ոստիկանական ծառայութիւնը։ Ստանիցայեաններից շատերը բողոք են ուղարկել Վասիլիէվին և իր համախոհներին։ Նոյն իսկ այն համայնքը, որ ընտրել է Վասիլիէվին, առաջարկել է վերջինիս այլ ևս չը վերադառնալ։ Սուրհանդակը բացատրել է, որ կօզակները առ հասարակ դժգոհ են ոստիկանական ծառայութեան պատճառով։

Զինուորական մինիստրութիւնը Կովկաս է ուղարկել գնդակացիրների, ռազմամթերքների, փամփուշտների և հրացանների մեծ պաշար։ Այդ բոլորը ուղարկված են մի յատուկ գնացքով։ «Наша Жизнь»։

Բերլինի «Vorwärts» լրագրի Պետերբուրգի Թղթակիցը հաղորդում է. ես ամենահաւատալի աղբիւրներից իմացայ, այսինքն մի անձից, որը անձամբ տեսել է փաստաթուղթը, որ Վիլհէլմ II-ը գրաւոր կերպով յայտնել է Պետերբուրգ, որ այն դէպքում, եթէ Պետական Դուման ընդունելու լինի հողերի բռնի գրաւման օրէնքը, այն ժամանակ ռուսական արժէթղթերը կը հանվեն գերմանական արժէթղթերի շուկայից։ Այդ միևնոյն աղբիւրից ես իմացայ նոյնպէս, որ մի բարձրաստիճան անձ, որը երկար ժամանակ մի շատ կարևոր պաշտօն է վարել Պետերբուրգի զինուորական շրջանում, մի քանի ժամանակ առաջ գնացած է եղել Բերլին Գերմանիայի համաձայնութիւնը ստանալու նպատակով, որ աջակցութիւն ցոյց տայ ռուսական յեղափոխութիւնը ճնշելու ժամանակ։ «Рѣчь»։

Մամուլի վերաբերեալ գործերի մասնաժողովի կարգադրութեամբ գրաւված են հետևեալ բրօշիւրները, որ ուղղված են Պետական Դումայի անդամների դէմ. «Ամնիստիա! Լիակատար Ամնիստիա! Թող կորչի մահվան պատիժը»։ «Русск. Вѣд.»

Աշխատաւոր խմբակի իրաւաբանական մասնաժողովը վերջացրել է ամնիստիայի օրինագիծը և առաջարկելու է խմբակի անդամների ընդհանուր ժողովին, որտեղ քննվելուց ու ընդունվելուց յետոյ օրինագիծը կառաջարկվի Պետական Դումային։ Կադետների կուսակցութիւնը, գոնէ նրա այն անդամները, որոնք ներկայ են եղել աշխատաւորների խորհրդակցութեանը, դէմ են օրինագծին։ Նրանք նոյն իսկ կարծում են, որ Պետական Դումայի նախագահը չի Թոյլ տալ նոյնիսկ առաջարկելու օրինագիծը քննութեան, ղեկավարվելով հիմնական օրէնքների 23-րդ յօդուածով։ Աշխատաւոր խմբակի մասնաժողովը այնուամենայնիւ որոշել է ինչ որ էլ լինի, աչքի առաջ ունենալով աշխատաւոր խմբակին ուղղվող անվերջ դիմումները ամնիստիայի վերաբերմամբ, օրինագիծը ներկայացնել Պետական Դումային։ «Мысль»։

Մօսկվայի դեկտեմբերեան զինված ապստամբութեան գործի քննութիւնը արդէն աւարտված է. «XX Вѣк.»-ի Թղթակիցը հաղորդում է, որ դատավարութիւնը կը սկսվի ներկայ տարվայ օգոստոսի սկզբներում։ Քննութիւնը պարզել է, որ ապստամբութեան մասնակցողների մի նշանաւոր մասը, որ այդ գործում աչքի ընկնող դեր են խաղացել, փախել են արտասահման։ Այդպիսիների Թիւը իբրև Թէ հասնում է 32 հոգու։

Մօտ օրերս Վարշավայում պայթեցրել են դինամիտով ի պատիւ գեներալ Նակիմօվիչի կառավարութեան կանգնեցրած յուշարձանը։ Նակիմօվիչը գործունեայ մասնակցութիւն է ունեցել 1831 Թւին լեհական ապստամբութեանը։ Պայթիւնը առաջացել է գիշերը. յուշարձանը կտոր-կտոր է եղել ու ցրվել։

Մ. Ա. Սպիրիդոնովային մօտ օրերս յանկարծակի ուղարկել են տաժանակիր աշխատանքի, առանց ուշադրութեան առնելու նրա վտանգաւոր հիւանդութիւնը։ Ուղարկելը տեղի է ունեցել գաղտնի և անսպասելի նոյն իսկ հիւանդի համար։

ՄԱԴՐԱՍԱՅԻՑ մեզ գրում են. Ե՞րբ պէտք է վերջապէս հայ ուսուցիչն էլ սովորական բանւոր դասակարգի նման բարւոքէ իր դրութիւնը. երևակայեցէք, դեռ տեղիս ուսուցիչները իրանց հասանելիք ռոճիկները լրիվին չեն ստացել։ Հոգաբարձուները շատ Թոյլ են վերաբերվում։ Եթէ այսպէս շարունակվի, ուսումնարանն էլ կընկնի եկեղեցիի օրին, այսինքն դրսից փառաւոր շինութիւն, իսկ ներսը բարոյական շատ քիչ սնունդ։ Մադրասեցիները, եթէ կամենում են իրանց ուսումնարանի առաջադիմութիւնը, պէտք է ուսումը ձրի անեն, որ հարիւրից աւելի աղքատ մանուկներ չը զրկվեն ուսումից, իսկ ուսումնարանի նիւթական մասը ամբողջապէս իր վրա առնէ ողջ հասարակութիւնը. միայն այդ հիմունքով դպրոցը ապահովված կարելի է համարել։

—

ԲԵՐԴՈՒՍ գիւղից (Կարսի շրջան).—Այսօր 10—12 օր է, չը տեսնված կերպով, անընդհատ անձրևներ տեղում. մի քանի Թուրքաբնակ գիւղերի ցանքսը կարկտահար եղաւ։ Բոլոր տները անձրևից կաթում. մի անկիւն չը մնաց, որ տներում գոնէ գիշերը մարդ հանգիստ լինէր։ Գիւղացիք խիստ անձրևների պատճառով, դուրս չեն կարող գալ դաշտային աշխատանքի։ Այս յունիս ամսի 25—30-ին սկսվում է գարեքաղը. ցանքսը լաւ է. կենսական բոլոր տեսակի մթերքները թանգ կրակ են։ Բերդուս գիւղը գտնվում է Կարսի շրջանի Օլթիի գաւառակում. մեզանում հայաբնակ գիւղերի թիւը ընդամենը 7 է. Բերդուս, Ճուճուրխ, Թէմրուդ, Կալկոս, Զարդանէս, Ագարակ և Էօրիւկ։ Շուտով անցնում են արձակուրդի ամիսները, գալիս է սեպտեմբերը, բացվում են մատաղ սերունդի առաջ հայ դպրոցները. արդեօք մեր տաճկախօս գիւղերումն էլ բացվելու են դպրոցներ… Կան այդ մասին մտածողներ… Բազմաթիւ թրքախօս մանուկներ թափառում են գիւղի փողոցներում և տգիտութեան մէջ խարխափում, առանց ուսման դպրոցի։ Կարսի Ղըզլ-Չախչախ գիւղացիների դէպքը շատ վատ տպաւորութիւն թողեց։ Մեզանում կատարեալ խաղաղութիւն է։

## ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունիսի։ Նիստը բացվում 2 ժամ 45 րոպէին։ Նախագահում է իշխան Դոլգորուկով։ Կարգադրիչ մասնաժողովի երրորդ անդամի ընտրութիւնից յետոյ, Դուման անցնում է Բէլօստոկի ջարդի քննութեան։

Խօսում են Սօնգայլօ, Մակուշին, Ստախօվիչ։ Մերժվում է հռետորներին 10 րոպէ յատկացնելու համար արած առաջարկը։

Սօնգայլօ առաջարկում է ամբողջ ճշմարտութիւնը Դումայի Նախագահի միջոցով յայտնել Թագաւոր Կայսրին.

Մակուշինը մանրամասն պատմում է Տօմսկի ջարդը և մատնացոյց է անում այն հանգամանքի վրա, որ Բէլօստոկի և Տօմսկի ջարդերի հիմնական կէտերը նոյնանիշ են։

Ստախօվիչ հրաժարվում է հաւատալ, որ ջարդ կազմակերպում է ինքը՝ կառավարութիւնը. չէ՞ որ այդ ջարդերի որպէս անմիջական հետևանք հանդիսանում է ռուս արժէթղթերի անկումը բորսայում. հազիւ թէ միջազգային բարդութիւններ ծագեն։ Դումային ներկայացրած տաղանդաւոր զեկուցման մէջ լսված է սոսկ մի կողմին, այն ինչ մեղադրվողներին չէ լսված։ Երևաց, որ հրէական ջարդերը տեղի են ունենում, որպէս ուղղութիւն դէպի ամենափոքր ընդդիմադրութեան կէտը։ Բայց չէ՞ որ ջարդեր եղել են և ուրիշ տեղերում, այն էլ ոչ պակաս արիւնալի։ Հռետորը ոչ մի դիտողական կազմակերպութիւն չի տեսնում։ Գլխաւոր ղեկավարները բացակայում են և բացակայել են։ Հարցը սկսվել է ոչ թէ հրէական, այլ քրիստոնեաների դեղատան մօտից։ Հէնց իրանք զեկուցանողները ընդունում են, որ կանոնաւոր հետազօտութիւն կարելի է կատարել միայն զինուորական ու քաղաքացիական իշխանութիւնների միացմամբ և զինուորական դրութիւնը վերացնելով։ Ինչպէս կարելի է այդօրինակ պայմաններում ոչ միայն քննել, այլ և դատարանին յանձնել։ Ընդհանրապէս զեկուցումը շատ բնաւորութիւն է կրում, և կազմված է վայրի վիրոյ և «եօլա տանելու» համար։ Յիշատակված է սպանութիւնների 89 դէպք, իսկ զեկուցագրի մէջ ցոյց է տրված զոհերի աւելի պակաս թիւ։ Հռետորը պաշտպան է դուրս գալիս ճապօնական պատերազմում քաջութեամբ կռվող զինուորներին և մեղադրում է զեկուցումի հեղինակներին, որ չափազանց ճռոմ յանդիմանութիւն են կարդում ռուս զինուորի հասցէին, և համեմատում է այն հրաբուխային սարի հետ, որին ոչ ոք և չէ տեսել, բայց նկարագրել է։ Այդ զեկուցումը կարող է արտայայտիչ լինել հէնց իրանց գրողների կարծիքին, բայց ոչ Դումայի կարծիքի… (Ծափահարութիւններ, սուլոց)։

Ստախօվիչից յետոյ խօսում է Ջապարիձէն, ապա Կօկօշկինը։ Հռետորը մի կրակոտ և ուժեղ ճառ է արտասանում, հերքելով Ստախօվիչի նկատողութիւնները, որ իբր ջարդը նման է հրաբուխի վիժուածքին։ Կօկօշկինը դիտողութիւն է անում, որ երկրի երերալը որոշող զգայուն գործիքը գտնվում է ոստիկանութեան վարչութեան բաժնում։ Կօկօշկինը վճռականապէս բողոքում է Ստախօվիչի կոչի դէմ, չը ստորացնել պետական իշխանութիւնը։ Այդպիսի քաղաքականութիւնը զարհուրելի հետևանքներ կառաջացնէ։ Չի կարելի վէրքերը ծածկել, այլ ընդհակառակը պէտք է երևան հանել, ցոյց տալ։

Կառավարութիւնը իջաւ բարոյական արժանապատւութեան ամենաստորին աստիճանին էլ… Դուման նոյնպէս պետական իշխանութեան մի մասն է, բայց նա իրան թոյլ չի տալ ստորանալ։ Վերջում Կօկօշկինը մի բանաձև է առաջարկում՝ անցնելու հերթական գործերին, որով Դուման մեղադրում է կենտրոնական կառավարութեան և տեղական բոլոր իշխանութիւններին ջարդ կազմակերպելու մէջ, և պահանջում է բոլոր մեղաւորներին դատարանին յանձնել միաժամանակ պահանջում է որ մինիստրութիւնը հրաժարական տայ, որը յեղափոխութեան դէմ մղած կռւում արդէն խորտակվում է և փուլ է գալիս, զինուորապէս, հարստահարված անպաշտպան հրէա ազգաբնակութեան վրա։

Ապա խօսում են Գոմարտելի և Բարճօվ սօցիալիստները, ցոյց տալով, որ առանց Բէլօստոկի ջարդի էլ արդէն յայտնի էր, որ կառավարութիւնը բաղկացած է ջարդարարներից, և օրինակ են բերում Լաւրօվին, գեներալ Բօգդանովիչին. գտնում են, որ Ստօլիպինը, երբ Սարատովի նահանգապետի պաշտօն էր վարում, իր համակրանքն է ցոյց տուել դէպի ջարդերը։ Գոմարտէլին հաւատացնում է, որ գոյութիւն ունեն այնպիսի թռուցիկներ, որոնց տակ մակագրված է՝ «տպել—Տրեպով»։

Խարտախայի ճառից յետոյ, որ Բէլօստոկի ջարդը նմանեցնում է Ռոստովի (Դոնի վրա) ջարդի հետ և ապացուցանում է, որ ոստիկանութիւնը ջարդի ժամանակ մատը մատին չէ խփել, խօսում է Մուխանօվ, որ առաջարկում է նիստը շարունակել մինչև 8 ժամը։ Առաջարկութիւնն ընդունվում է։ Բէլօստոկի ջարդի մասին խօսելու ցանկութիւն են յայտնում Դումա, Բարօն Շտէյգէլ և Սպօսօբնի. որը խօսում է Կիէվի ջարդի մասին և վերջում կասկած է յայտնում, թէ մի գուցէ մինիստրութեան փոփոխութիւնն էլ չազդէ երկրի խաղաղացման վրա։

Դրա համար անհրաժեշտ է ոչնչացնել այն գաղտնի կառավարութիւնը, որի մասին խօսել է իշխան Ուրուսօվը։ Սպօսօբնին մի ընդարձակ ճառով ապացուցանում է, որ Բէլօստոկի ջարդին մասնակցել են ազգաբնակութեան բոլոր խաւերի ներկայացուցիչները։

Հրէական երիտասարդութիւնը իսկապէս վարակված է անիշխանութեամբ և զինում է ռուս ամբողջ ազգաբնակութիւնը, ամբողջ հրէա ազգաբնակութեան դէմ՝ Միակ ելքը կայանում է նրանում, որ բոլորը միահամուռ ջանքերով կռիւ սկսեն չարի դէմ, քանի որ իրանք հրէաները գիտակցում են, որ իրանց անզօր են զգում կռվելու իրանց երիտասարդութեան դէմ։

Ճառից յետոյ լսվում են թոյլ ծափահարութիւններ և սուլոցներ։

Դուման անցնում է հերթական և ստիպողական հարցապնդումներին։ Ընդունվում են երկուսը որ վերաբերում են մահվան պատիժը դադարեցնելուն։ Ալադինը պաշտպանում է հետևեալ հարցապնդումը, որ կայանում է նրանում, որ Ռօժէստէվսկի մասում, երբ հասարակութիւնը դուրս է եկել կաղէտների կլուբից ոստիկանութիւնը յարձակվել է նրա վրա և սկսել է ծեծել, հռետորը Դումայի ուշադրութիւնն է հրաւիրում այն բանի վրա, որ յիշեալ թաղամասում համարեա ամեն օր ծեծ ու ջարդ է տեղի ունենում։

Խարդախայ ցոյց է տալիս, որ ժողովների արգելքը և ոստիկանութեան ծեծը հասարակութեան, վերջնականապէս արգելք են հանդիսանում նոյն իսկ պատգամաւորների ազգաբնակութեան հետ շփվելուն։ Որոշվում է հարցապնդում անել։

Հետևեալ հարցապնդումը վերաբերում է այն լիազօրի բանտարկութեան, որ Կուխանսկից գալիս է եղել Պետերբուրգ, նակազը պատգամաւորներին յանձնելու համար. պաշտպանում է կրկին Ալադինը, ասելով որ փոքր փաստից կարելի է մեծ փաստ ստեղծել և հարց է տալիս. «կարող ենք արդեօք խաղաղ առնչութիւն ունենալ ազգաբնակութեան հետ, թէ ոչ։ Եթէ չենք կարող, այն ժամանակ պատմութիւնը կը յիշատակէ այդ բանը.» բայց հազիւ թէ այդ խաղաղ ճանապարհ կոչէ։ Հարցապնդումը ընդունվում է, ինչպէս և ընդունվում են մնացած երեք հարցապնդումները։

Նիստը փակվում է 7 ժամ 40 րոպէին։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

29 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունիսի։ Պետական Դումայի կից ֆինանսական մասնաժողովը կազմել է հինգ առանձին բաժիններ. 1) պետական գոյքերին և արքայանշաններին (ռէգալիա) վերաբերվող ֆինանսական հարցերը քննող, 2) հարկերի, տուրքերի և վճարումների գործերը քննող, 3) սեփական ֆինանսական հարցերը քննող, 4) առևտրին և արդիւնաբերութեան վերաբերվող գործերը քննող և 5) պետական եկամուտների կամ գոյքերի մի մասը գրաւելու հարցով զբաղվող։—Բարձրագոյն հրամանով Պետական Դումայի Նախագահ Մուրոմցեվ և անդամներ՝ Պետրաժեցկի և Մակսիմ Կովալեվսկին նշանակված են, առաջինը, Մօսկվայի համալսարանի անկախ պրօֆէսօր, երկրորդը և երրորդը՝ Պետերբուրգի համալսարանի պրօֆէսօրներ։

ՊԱՐԻԶ, 28 յունիսի։ Պատգամաւորների պալատը ընդունեց վերջապէս, որ ամնիստիան տարածվի և գործադուլի պատճառով արձակված նամակատարների և պօստային ծառայողների վրա։

ՎԱՐՇԱՎԱ, 28 յունիսի։ Կողոպտված են Պետական 6 գինու պահեստներ։ Կայարանները լի են մեկնող հրէաներով։ Նրանք փախչում են ջարդի ուրուականից։

ԿԻԵՎ, 28 յունիսի։ Լէբէտին գիւղի բնակիչները յարձակվեցին անցնող դրագունների վրա և 5-ին վիրաւորվեցին։

ՍԻՄՖԵՐՕՊՈԼ, 28 յունիսի։ Երեկոյեան դէմ ծանր կերպով վիրաւորված է պրիստաւի օգնական Կօվալեվը։ Մահափորձողը բռնվեց, և երևաց որ յեղափոխական Ստեփանօվն է։

ՕԴԷՍՍԱ, 28 յունիսի։ Նաւահանգստում գործադուլը դեռ շարունակվում է, ահագին վնաս պատճառելով հաց տեղափոխելու գործին։ Նաւերի երթևեկութիւնը դադարեց։

ՄՕՍԿՎԱ, 29 յունիսի։ Կրկին գործադուլ արին մի գործարանի 1000 բանուորներ։

ՊԱՐԻԶ, 29 յունիսի։ Պատգամաւորների պալատում սօցիալիստներ Բիւիսոնի և Պէլլըտանի պահանջին՝ կրկին վերընդունել պօստային արձակված նամակատարներին,—մինիստր Բարթուն պատասխանեց մերժումով։ Պալատը մերժեց Պէլլըտանի և Բիւիսոնի առաջարկը։

30 յունիսի

ՎԱՐՇԱՎԱ, 29 յունիսի։ Ցուցիչ լուրերի ազդեցութեան տակ, որ իբր վաղը մեծ ջարդ է սպասվում, հրէաները տասնեակ հազարաւորներով սարսափահար այսօրվանից հեռանում են քաղաքից։ Իշխանութիւնները ձեռք են առել ամեն միջոցները՝ ջարդը իր սաղմում ճնշելու համար։ Քաղաքում, շնորհիւ ձեռք առած միջոցների—հանգիստ է։

ՍԱՄԱՐԱ, 29 յունիսի։ Մարեէվկում սկսվել են ագրարային անկարգութիւններ։ Ջարդ ու փչուր է արված Դոկուչաեվների խրճիթը։ Անկարգութիւնների տեղը մեկնեց նահանգապետը։

ԼՕՆԴՕՆ, 29 յունիսի։ Համայնքների պալատի անդամ Կրամէրը հեռագրել է Մուրոմցեվին. «Աշխարհիս հինաւուրց պարլամենտի 356 անդամները իրանց ողջոյնն են առաքում ռուս ներկայ պարլամենտին, և յոյս ունեն որ նրա ներկայացուցիչներին կը տեսնեն առաջիկայ միջազգային կոնֆերենցիայում — Վեստմինստէրեան պալատում»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունիսի։ Պետերբուրգի Հեռ. Գործակալութիւնը լիազօրութիւն ունի յայտնել, որ «Рѣчь» լրագրի հաղորդած լուրը, որ իբր ֆինանսների մինիստրը յունիսի 28-ին ունեցած սովորական գործերի մասին խօսակցութեան ժամանակ յայտնել՝ է թէ ներկայիս ամբողջ մինիստրութեան կազմը հրաժարական է տուել,—մտածածին է։ Մինիստրը ոչ մի խօսակցութիւն չէ ունեցել։

ԼՕՆԴՕՆ, 29 յունիսի։ Միջազգային կոնֆերենցիան կազմակերպող կոմիտէտը յայտնում է, որ իւրաքանչիւր երկրի պատգամաւորները կազմում են մի խմբակ, առանց կուսակցութեան խտրութեան։ Իւրաքանչիւր ազգ ներկայանալու է մի խմբակով։ Մի ազգ չի միջամտելու մի ուրիշ ազգի ազգային ցանկութիւններին և ներքին գործերին։ Վիճաբանութիւնները նուիրված են լինելու Հաագայի միջազգային միջնորդ դատարանի ներկայ և ապագայ դրութեան հարցին։

ԶԱՏՕՆՍԿ, 28 յունիսի։ Ամբողջ օրը գիւղացիները շարունակում էին ջարդել ու փչրել հէնց իրանց գիւղացիների կալուածքները։ Փողոցներում շրջում են արիւնռուշտ կործանիչները։ Ստրաժնիկները անզօր են ջարդը կանգնեցնել. յունիսի 29-ին եկան դրագուններ։

ԲՕՄԲԷ, 29 յունիսի։ Բոմբէի բժշկական մասի կառավարիչ Տերնէրը շատպով փորձեր է կատարում նաւթով, որպէս ժանտախտի դէմ ախտահանիչ միջոց։ Ենթադրում են, որ այդ փորձերով կաջողվի համաճարակը ոչնչացնել։

ՎԱՐՇԱՎԱ, 29 յունիսի։ Օրը խաղաղ անցաւ, բայց հրէական թաղը դատարկ է։ Խանութները փակ են։ Երկաթուղային ծառայողները, օգտվելով մասսայական հեռանալուց, գործադուլ են արել և դրել են տնտեսական մի շարք պահանջներ։ Երթևեկութիւն դադարած է։

ԽԵՐՍՕՆ, 29 յունիսի։ Աստուածածնայ պատկերի թափօրը հանգիստ անցաւ։ Հրէաները վախենալով ջարդից, ամեն օր մեկնում են քաղաքից։

ԿՕՎՆՕ, 20 յունիսի։ Վելի գետում լողացողները, գետի յատակում գտել են փալասների մէջ փաթաթած 3 չուգունէ ռումբ, իւրաքանչիւրը 3 պուդանոց։

ՊՕԼՏԱՎԱ, 29 յունիսի։ Ջարդի լուրերի ազդեցութեան տակ, վերջին օրերս կայարաններում, ասեղ գցես գետին չի ընկնի։—Վաճառված են 7000 տոմսեր. ամբողջ փողոցներ դատարկվել են։

ՍՈՒԴԺԱ, 29 յունիսի։ Մի կալուածքում դրագունների և գիւղացիների միջև ընդհարում տեղի ունեցաւ, որի հետևանք եղաւ 2 սպանված, 4 վիրաւորված։

ԽԱՐԿՕՎ, 29 յունիսի։ Սէվաստոպօլի երկաթուղու դէպօյի բանուորները երէկ դադարեցրին աշխատանքները։ Բանուորների մէջ յուզմունք է տիրում. սպասվում է, որ տնտեսական պահանջներ առաջարկեն։

ԼՕՆԴՕՆ, 29 յունիսի։ «Դէյլի-Տելեգրաֆի», Տօկիօից ստացած վերջին տեղեկութիւնների համաձայն, Մանջուրիայի երկաթուղու ճապօնական մասը արդէն բացված է մինչև Տէլին։

ՊԱՐԻԶ, 29 յունիսի։ Կառավարութիւնը պարլամենտին ներկայացնելու է մի նախագիծ, որի համաձայն Պեկարին վերադարձնելով տրվելու է բրիգադայի գեներալի, իսկ կապիտան Դրէյֆուսին՝ էսկադրօնի հրամանատարի պաշտօններ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ե. Գ. ԱՐԵՆՑ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—7—7 և կէս ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Հասարակական (կօնսիլիւմի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպեկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 184—300

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ընդունում է հիւանդներ հանքային ջրերում. Կիսլօվօդսկ հիւրանոց Ռօսսիա № 14. վեներական և մորթու հիւանդութիւններ։ Гостиница Россія № 14. 14—20

ԲԺԻՇԿ
Պ. Տ. Խախանեան
Արտասահման գնալու պատճառով դադարեցրել է հիւանդների ընդունելութիւնը։ 1—7

«ԱՐԳԱՍԻՔԸ»

Ներկայ պայմաններում չի կարող հրատարակվել։ Բաժանորդներից նրանք, որոնք՝ չը սպասելով թերթի լոյս տեսնելուն՝ բաւարարութիւն կուզեն,—թող դիմեն խմբագրին՝—Судебная, № 54. 1—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

„ԿԵԱՆՔ"-Ի

16-րդ համարը հետևեալ բովանդակութեամբ

Յեղափոխութիւնը զօրքի մէջ։—Սօցեալ-դեմօկրատիայի կազմակերպչական սիստեմը։—Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան։—Հայրենի սահմանում (բանաստեղծութիւն)։—Բանուորական պրոֆեսիօնալ (արհեստակցական) միութիւնների մասին։—Ինչպէս չենք զարմանում (պատասխան դաշնակցական Հ.-ին)։—Հայ ուսուցչական համագումարի առթիւ։—Դիրձակ արհեստաւորների կեանքից։—Մի բողոք (Նամակ Խմբագրութեան)։—Թղթակցութիւններ 1. Գործարանական կեանքից։ 2. Նաւթահանքային և գործարանական կեանքից։ 3. Մի որոշում։)—Մամուլի շուրջը։—Ներքին տեսութիւն։ (Ագրարային շարժումը)։—Արտաքին տեսութիւն (Ժընեվի միտինգը Բէլօստոկի ջարդի մասին)։—Յայտարարութիւններ։

Խմբագրութեան հասցէն՝ Чавчавадзевская 4. 1—1

Պարսկաստանի Արդաբիլ քաղաքի հայոց դպրոցի համար հարկաւոր են՝

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ և ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

(ամուսիններ, կամ քոյր և եղբայր)։ Ցանկացողները պէտք է դիմեն պայմանների մասին «Մշակի» խմբագրութեան, պ. Առաքելեանին։ 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում
ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ
(Բ. ՑՏԵՐՆԻ)
ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ
գերմ. թարգմ.
Լ. ԲԱՔԱՅԵԱՆԻ
առանձին գրքերով լոյս են տեսել թարգմանչի նաև հետևեալ աշխատութիւնները
1. Զ. Վերգա՝ Գիւղական Ասպետութիւն, Թարգմ. գերմ. 15 կ.։
2. Մ. Նորդաու՝ Հայրենասէր Իտալացին, Թարգմ. գերմ. 10 կ.։
3. Մ. Հալբէ՝ Միստեմ, Թարգմ. գերմ. 15 կ.
4. Ի. Ահօ՝ Երկու Նովելլա, Թարգմ. գերմ. 10 կ.
5. Հ. Իբսէն՝ Հասարակութեան Նեցուկները Թարգմ. գերմ. դրամա. 50 կ.
(ամ. օր.)

Ղուբայի հայոց երկդասեան դպրոցի առաջիկայ 1906—1907 թւականի համար հարկաւոր է մի ցենզաւոր ՈՒՍՈՒՑԻՉ, որ պիտի աւանդէ հետևեալ առարկաներից՝ ռուսաց լեզու, ռուսաց պատմութիւն, Ռուսաստանի աշխարհագրութիւն, թուաբանութիւն և բնական պատմութիւն. շաբաթական ընդամենը 30 դաս։ Տարեկան ռոճիկ. 450 րուբլի, բնակարան, (մի սենեակ դպրոցում) ծառայ, վառելափայտ և լուսաւորութիւն։ Ցանկացողները թող դիմեն այս հասցէով. Куба (Бакин. губ.) попечителю Армянскаго училища Александру Богданову.

հ. շ. ե. 2—3

„Գուտտենբերգ"
գրավաճառանոցում վաճառվում են.
1. Պոմպէյի վերջին օրերը, Լորդ Լիտտօնի, Թարգմ. Յ. Միրզայեանի 1 ր. 50 կ.։
2. Ասպետ, Վ. Փափազեանի 15 կ.։
3. Կեանքը ծովերի խորքում, Լունկևիչի, Թարգմ. Ստ. Մալխասեանի 30 կ.։
4. Տրիլբի, դրամա 4 արար. Թարգմ. Լ. Մելիք-Ադամեանի 25 կ.։
5. Եաղ-սաստ, վօդ. 1 արար. 2 պատկեր. Յակ. Ղազարեանի 25 կ.։
6. Դարվինիզմ, Ս. Բալադեանի (Դարվինի պատկերով) 50 կ.։
7. Ազնիւ գող, վիպակ. Ֆ. Մ. Դոստոյեվսկու, Թարգմ. Ն. Պ. 10 կ.։
8. Ինքնավարութիւն և Զեմստվօ, Բելօկօնսկու. Թարգմ. Կ. Ջալալեանի 15 կ.։
9. Տնտեսագիտական զրոյցներ, Կարիշևի, Թարգմ. Կ. Ջալալեանի 40 կ.։
10. Къ введенію на Кавказѣ Земскаго Самоуправленія Кн. М. Туманова. 20 կ.։
11. Քերականութիւն մայրենի լեզուի, (Ա. Բ. և Գ. մաս. Ստ. Պալասանեանի 75 կ.։
12. Ընդհանուր պատմ. Հին-Դար, Վինոգրադովի, Թարգմ. Խաժակի 1 ր.։
13. Եւրոպա և Հայաստան, Ամֆիթէատրովի, Թարգմ. Ա. Մխիթարեանցի 10 կ.։
14. Փուչ Ջանք, դրամա 5 գործ. Գ. Ղարաջեանի 50 կ.։
15. Արևին Աւետարանը, Թարգմ. Տ. Զաւէնի 25 կ.։
16. Գծագրութեան օրինակներ, հայոց դպրոցների համար, կազմեց Գ. Լևոնեան 20 կ.։
—
Գումարով գնողներին զիջումով։ Գրախանութը վերադիր վճարով ուղարկում է միմիայն նրանց, որոնք ուղարկում են կանխավճար։ Դիմել.—Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустяну.
2—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն Թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեան, յուլիսի 2-ին առաւօտեան ժամը 12-ին Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցում կայանալու է նոր երեցփոխի ընտրութիւնը, ուստի հրաւիրում են յարգելի ծխականները ներկայ գտնվել։ Եթէ ներկայ չեն լինի ծխականների գոնէ 1/5 մասը, ժողովը կը յետաձգվի և կը կայանայ հետևեալ կիրակի յուլիսի 9-ից։

Թիֆլիս քաղաքի Կուկիայի Նորաշէն եկեղեցու աւ. երէց Տէր-Յովհաննիսեանց։

(ու. շ.) 2—2

## ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

| | Պօստային | Մարդատար. | Արագ. | Ապրանք. |
|---|---|---|---|---|
| Բագուից դուրս գալը | 4 ժ. 53 ր. ցեր. | 11 ժ. 03 ր. ցեր. | 12 ժ, 20 ր. գիշ. | 4 ժ. 03 ր. գի |
| Թիֆլիս հասնելը | 11 » 26 » » | 5 ժ. 25 ր. առ. | 1 ժ. 30 ր. գիշ. | 9 ժ. 37 ր. երեկ. |
| Թիֆլիսից դուրս գնալը | 12 » 26 » » | 6 ժ. 01 ր. առ. | — | — |
| (Թիֆլիսի ժամանակով) | 1 » 24 » » | 6 ժ. 59 ր. առ. | — | — |
| Բաթում հասնելը | 1 » 38 ր. գիշ. | 7 ժ. 07 ր. եր. | — | — |
| Բաթումից դուրս գալը | 5 » 22 » » | 5 ժ. 24 ր. ցեր. | — | — |
| Թիֆլիս հասնելը | 6 » 11 ր. եր. | 6 ժ. 39 ր. առ. | — | — |
| Թիֆլիսից դուրս գալը | 6 » 58 » » | 7 ժ. 37 ր. առ. | 5 ժ. 35 ր. ցեր. | 10 ժ. 40 ր. |
| (Թիֆլիսի ժամանակով) | 7 » 56 » » | 8 ժ. 35 ր. առ. | 6 ժ. 33 ր. ցեր. | 11 ժ. 38 ր. գի |
| Բագու հասնելը | 1 » 20 ր. ցեր. | 12 ժ. 42 ր. գիշ. | 6 ժ. 19 ր. առ. | 3 ժ. 55 ր. ցեր |
| Երևանից դուրս գալը | 12 » 02 » » | — | — | 11 ժ. 26 ր. գիշ |
| Կարսից » . » | 3 » 57 » » | — | — | 3 ժ. 18 ր. գիշ |
| Ալեքսանդրապօլից դուրս գալը | 7 » 38 ր. եր. | — | — | 7 ժ. 06 ր. առ |
| Թիֆլիս հասնելը | 5 » 06 » առ. | — | — | 4 ժ. 49 ր. ցեր |
| Թիֆլիսից դուրս գալը | 11 » 12 » գիշ. | — | — | 3 ժ. 25 ր. ցեր |
| (Թիֆլիսի ժամանակով) | 12 » 10 » » | — | — | 4 ժ. 23 ր. ցեր |
| Ալեքսանդրապօլից դուրս գալը | 10 » 30 » առ. | — | — | 2 ժ. 47 ր. գիշ |
| Երևան հասնելը | 1 » 55 » ցեր. | — | — | 6 ժ. 10 ր. գիշ |
| Կարս հասնելը | 4 » 23 » » | — | — | 8 ժ. 48 ր. առ. |



!!!ՕԳՏՎԵՑԷՔ ԶԵՂՉԱԾ ԳՆԻՑ!!

Փոխանակ 22 րուբլու, միմիայն 6 ր. 75 կ. ճանապարհածախսով ուղարկում եմ 16 հետև արժէքաւոր իրերը, այսինքն՝ 1) ժամացոյց սև մետաղէ և բաց տղամարդու կամ կանա ոսկէ զարդարանքով, քօքվում է առանց բանալիքի, 1-ին տեսակի, 2) ամերիկական ո շղթայ, գրահաւորված, իսկ կանացի ժամացոյցի հետ շղթայ ամերիկական ոսկու, 8) հատ արծաթէ բրելօկներ 84 պրոբի զանազան ձևի ոսկեզօծ, 9) կաշուէ քսակ 7 բաժա մունքներով, մեխանիքական կողպէքով կնիքի համար, 10) կաուչուկէ կնիք պատուէր տուո անունի, հօր անունի և ազգանունի համար, 11) ոսկէ մասիւ մատանի 56 պրոբի քարո կամ կաշուէ պորտսիգար արտասահմանի շինուածք՝ 12) մունդշտուկ—ապպարատ բժ. Կօխ անվնաս ծխելու համար, 13) նոր տեսակի լուցկաման գեղեցիկ նկարներով սպիտակ մետա ղից, 14) գրպանի դանակ անգլիական պողպատից 2 բերանով և խցանահանով, 15) այծեամ կաշուց պատրաստված քսակ, ժամացոյցը փչանալուց պահպանելու համար, 16) հեռադիտա (бинокль) պատկերներով։ Այս բոլոր յիշեալ առարկաները ուղարկում եմ փոխանակ 22 ր. ընդամենը միայն 6 ր. 75 կ. ճանապարհածախսով. պատուէր ստանալուն պէս վերադիր վճարով և առանց կանխավճարի։ Ժամացոյցները ուղարկում են լիովին ստուգված, երաշխաւորութեամբ 5 տարով։

Նոյն տեսակի ժամացոյց ծածկած յաւելուածներով 75 կոպ. թանգ։ Հասցէն գրել՝ Центральное депо часовъ Торгов. фирмѣ М. М. Хазановъ, Варшава, почтов. ящикъ № 94.

Ծանօթութիւն։ Այն պատուէր տուողներին, որոնք կանխավճար կուղարկեն, (թէկու պօստի մարկաներով) ժամացոյցի վրա ձրիապէս փորագրվում են անուանատառերը։ Թղթա ցութիւնը միայն ռուսերէն կամ գերմաներէն լեզուներով։

(ամ. 1, 15) 1—2

## Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերութեան վարչութի

Սրանով յայտարարում է, որ այս 1906 թ. յուլիսի 1-ին առաւօտեան ժամը 11- վարչութեան շէնքում, Պուշկինսկայա փողոցում, ԾԱԽԵԼՈՒ ԵՆ ՆԵՐՔԵՒՈՒՄ ՅԻՇՎԱԾ Ա ՁԵՐԻ ԿԱՅՔԵՐԸ։

№№ 307 և 3089։ Ներսէսօֆներ Ս. Բ. և Մ. Ա., Բագինօվա Ն. Ա. և Արիւթինօվա Ա. երկյարկանի տուն, իր բոլոր կառուցուածքներով, բակով և հողով, որի չափն է 39 քառ. սաժ., կամ որքան որ կը լինի իրականի մէջ, 5-րդ քաղաքամասում Մալօ-Պոլիցեյ նայա փողոցի վրա (Мало-Полицейская № 23.) պարտքի դրամագլուխը 1823 րուբլի 71 կօպ. ապառիկ 313 ր. 46 կօպ.։

№№ 1355 և 2915։ Սարգիսօվ Է. Ս., հողաբաժին 162,70 քառ. սաժ., երկյարկանի ներքնայարկով տուն, երեք ֆլիգելներով, որոնցից մէկը՝ երեք յարկանի, միւսը՝ երկու յար կանի և ներքնայարկով, և երրորդը՝ երկու յարկանի, 10-րդ քաղաքամասում, Водопроводна ул. № 151. Պարտքի դր. 11,450 րուբլի 85 կօպ., ապ. 1556 ր. 48 կ.։

№ 2213։ Ախումօվա Ե. Ի. հողաբաժին 35 քառ. սաժ., որի վրա կայ երկյարկան տուն (խանութ) ներքնայարկով, 5 уч. Большая Кривая ул. № 65. պարտքի դրամագլ 3612 ր. 39 կ., ապ. 392 ր. 33 կ.։

№№ 2232, 3471, 3633 Տեկնօվա Պ. Ի. հող. 110 քառ. սաժ. երկյարկանի տնով և եր յարկանի ֆլիգելով, 10 уч. Дидубэ, Проектированная ул. № 65. պարտքի դրամագլուխ 11,522 44 կ., ապ, 424 ր. 95 կ.։

№ 2577։ Ախշարումօվ Ա. Բ. հողաբաժին 68 քառ. սաժ., իսկ ընկերութեան ճար րապետի չափելովը 100 քառ. սաժ., երկյարկանի տուն ներքնայարկով և երկու ֆլիգ րով, 7 уч. уголъ Норійской и Махатской ул. պարտքի դր. 6890 ր. 805 ր. 84 կ., ապ.68 կ.

№ 2646։ Ամիրաղօվ Դ. Գ. երկու կից հողաբաժիններ, ընդհանուր չափն է 69 սաժ., կամ որքան որ կը լինի իրականի մէջ, երեք յարկանի տնով, որն ունի ներքնայա 5 уч. уголъ Георгіевской и Іерусалимской ул. պարտքն է 26,644 ր. 66 կ., ապ. 4814 ր. 41 կ.

№ 2733։ Ախումօվա Ե. Ի. հողաբաժին 27 քառ. սաժ., իսկ ըստ տիրոջ յայտարար թեան և համաձայն ընկերութեան ճարտարապետի չափելուն՝ 40 քառ. սաժ., երկյարկ տնով, որ ունի ներքնայարկ. 5 уч. уголъ Большой Кривой ул. и Татарскаго Майдана. պարտք 11105 ր. 52 կ., ապ. 989 ր. 87 կ.։

№ 2987։ Ալիխազօվա Մ. Դ. հող 205 քառ. սաժ., կամ որքան կը լինի իրականի մէ երկու տնով, որոնցից մէկը երկու յարկանի, ներքնայարկով, իսկ միւսը՝ երկու յարկ ներքնայարկով և նրան կից երկու ֆլիգելներով, երեք և երկու յարկանի, 5 уч. уголъ Муранской и Полицейской ул. № 26 и 13. պարտք՝ 37,503 ր. 31 կօպ., ապ. 3577 ր. 39 կ.։

№ 3283։ Բօչարօվ Ա. Ն. հող 352 քառ. սաժ. երկու յարկանի տնով, որ ունի ներքն յարկ իր բոլոր պարագաներով, 9 уч. Елизаветинская ул. պարտքն է 47,511 ր. 38 կ., ապ. 5128 ր. 19 կոպէկ։

№ 3389։ Աբրահամօվ Ի. Ի. հող 135 քառ. սաժ, կամ որքան կը լինի իրականի մ երեք յարկանի տնով, որ ունի երկու հատ երկյարկանի ֆլիգելներ, 9 уч. Великокняжеская 9։ Պարտք 31,558 ր. 55 կ., ապ. 2907 ր. 1 կ.

№ 3449։ Վատիտաձէ Ի. Ս. հող 250 քառ. սաժ. երեք յարկանի տնով, որ ունի եր յարկանի ֆլիգել ներքնայարկով, 10 уч. уголъ Андреевской и Батумской ул. պարտքն է 36,340 14 կ., ապ. 2864 ր. 44 կ.։

№ 3577։ Շէյդայեվ Ալիբէկ. հող 17,522 քառ. սաժ. երկյարկանի տնով, որ ունի ներ նայարկ և մի երկյարկանի ֆլիգել։ 10 уч. уголъ Михайловской и Сагурамской ул. պարտք 32358 ր. 41 կ. ապ. 38 կ.։

№ 3362։ Կազարօվ Ա. Ի։ Երեք հողաբաժին, ընդհանուր չափը 264 և կէս քառ. սա նում որքան որ կը լինի, մի-յարկանի տնով, որ ունի ներքնայարկ և երեք մէկ-յարկ ֆլիգելներ, 10 уч. уг. Дидубійской и Потійской ул։ Պարտքն է 12943 ր. 96 կ., ապ. 1863 64 կ.

№ 3639։ Խարլօմֆներ՝ Գ. Զ. Ֆ. Պ. Ն. Ս. Դ. Է. Դ. Կ. և Ի. Զ. հող $41^1/_3$ քառ. սաժ. որքան որ կը լինի իրականի մէջ, երեք յարկանի տնով, որ ունի ներքնայարկ մի երկյարկ ֆլիգելով, 3 уч. уголъ Эриванской пл. и Музеумскаго пер. Պարտքն է 16641 ր. 47 կ., ապ. 189 97 կ.։

№ 3734։ Ցխօվրեբօվա Ս. Մ.։ Հող 139 2/3 քառ. սաժ, կամ որքան որ կը լինի իրա նի մէջ, երեք յարկանի տնով, որ ունի ներքնայարկ երկու նոյնատեսակ ֆլիգելներով, 10 Шереметевская ул. Պարտքն է 18722 ր. 46 կ., ապ. 2452 ր.։

№ 3893։ Կօզլօվ Դ. Վ. Հող 78 քառ. սաժ. կամ որքան որ կը լինի իրականի մէջ, յարկանի տնով որ ունի երկու հատ երկ-յարկանի ֆլիգելներ, որոնցից մէկը՝ ներքնա կով, 10 уч. Шереметевская ул, № 15. Պարտքն է 2842 ր. 31 կ., ապ. 301 ր. 11 կ.։

№ 3985։ Ախումօվա Ե. Ի. Հող 30 քառ. սաժ., երկյարկանի տնով (խանութ) 5 уч. Майдана и Майданскаго пер. Պարտքն է 14377 ր. 12 կ., ապ. 1373 ր. 78 կ.։

№ 3989։ Մնիտիկին Վ. Ի. Հող 129 քառ. սաժ. երեք յարկանի տնով, որն ունի երկ յարկանի մի ֆլիգել ներքին յարկով, 4 уч Меликовскій туп. отъ Гурійскаго пер. Պարտք 21086 ր. 44 կ., ապ. 1992 ր. 21 կ։

№ 4015։ Պօպօվ Օ. Ս. Հող 144, 5 քառ. սաժ. կամ որքան որ կը լինի իրականի երկյարկանի տնով, որն ունի մի ներքնայարկ և մի երկյարկանի ֆլիգել, 7 уч Телавскій пик. Պարտքն է 7667 ր. 80 կ., ապ. 861 ր. 86 կ.

(ու. շ.) 2—1

ՀԱՍԿԵՐ

№ 6. Յունիս 1906 թիւ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ՀՐԱՆՏԻ ԽՆՋՈՅՔԸ, Նշ. Փարտաշեանի
2. ԹԹԵՆՈՒ ՎՐԱ, մենախօսութիւն. Սմզալեանի
3. ՄԱՆՈՒԿ, Հիպլիրիգի
4. ՁԱԼՈՒ ԷՇԸ պատմուածք Յակ. Աղա-Բաբի,
5. ԴԵՐԻԿ ԿԱՄ ԴԷՊԻ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ, ուխտագնացութիւն—Սէյրի.
6. ՀԱՅՐԵՆԻ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻՑ ԵՒ ՎԷՊԵՐԻՑ. Երուանդ Արշակունի և Սմբատ Բիւրատեան—Ստ. Լիսիցեանի.
7. ԿԵԱՆՔԻ ՕՐԷՆՔՆԵՐԸ, Արնօլդ-Ֆօրստերի
8. ՓՈՍՏԱՐԿՂ, Կ. Լ.-ի.
9. ՁԻԱՐՃԱԼԻՔ

ՆԿԱՐՆԵՐ. պ. պ. Ալիխեանի, Գ. Երիցեանի, Ա. Շահմազեանի և Օ. Շմերլինգի։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ

ա) ԵՐԵԽԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ. բ) ՄԵԾԵՐՆ ՈՒ ՓՈՔՐԵՐԸ։

Շարունակվում է բաժանորդագրութիւնը
Տարեկան 4 ր., կէս տարին 2 ր., առանց մանկավարժական բաժնի տարեկան 3 ր., կէս տարին 1 ր. 50 կ.—Тифлисъ редакція «Аскеръ».

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. ул. № 5